Նկարագրություն. 2025 թվականին ԵՆԿ ՀԿ-ն, ընդլայնելով համագործակցությունը տարբեր միջազգային գործընկերների հետ, Եվրոպական միության «Էրազմուս +» և այլ ծրագրերի շրջանակում Հայաստանից 83 երիտասարդների և երիտասարդական աշխատողների համար ապահովել է կարողությունների զարգացման տարբեր հնարավորություններ:

2025 թվականին ԵՆԿ ՀԿ-ն հյուրընկալել է նաև 2 միջազգային շարժունակության ծրագիր Հայաստանում, որոնց մասնակցել է ընդհանուր 69 մասնակից՝ 34-ը Հայաստանից և 35-ը՝ այլ երկրներից:

Իրականացված ծրագրերը ներառել են այնպիսի թեմաներ, ինչպիսիք են երիտասարդական աշխատանքը և ոչ ֆորմալ ուսուցումը, առաջնորդությունը, ակտիվ քաղաքացիությունը, բնապահպանությունը, արվեստը և միջմշակութային երկխոսությունը, ներառականությունը, մարդու իրավունքները, ինչպես նաև թվային և մեդիա գրագիտությունը:





When: January - December 2025

Where: Armenia, Georgia, Poland, Lithuania, France, Czech Republic, Hungary, Norway, Albania, Kosovo

Number of mobility projects in Armenia: 2
Number of participants hosted: 69 (34 from Armenia, 35 from abroad)

Number of mobility projects outside Armenia: 15
Number of participants sent: 83

Description: In 2025, YIC NGO, expanding its cooperation with various international partners, provided different capacity-building opportunities for 83 individuals from Armenia within the frameworks of the European Union's Erasmus+ and other programmes for youth and youth workers.

In 2025, YIC NGO also hosted 2 international mobility projects in Armenia, with 69 participants - 34 from Armenia and 35 from other countries.

The implemented projects covered topics such as youth work and non-formal education, leadership, active citizenship, environmental protection, art and intercultural dialogue, inclusion and human rights, as well as digital and media literacy.





«Green ME!»

“Green ME!”

Երբ. 22 – 29 հունիս 2025 թ.

Որտեղ. Դիլիջան, Հայաստան

Նպատակ. Խթանել մասնակիցների մոտ հանդուրժողականությունը, անկեղծությունը, առողջ մրցակցությունը և թիմային աշխատանքը՝ ընկալելով բնությունը որպես արժեքների ձևավորման, տարածման և խթանման միջոց:

Նկարագրություն. «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն, «Centrum Edukacji i Pracy Mlodzieży OHP w Lublinie» (Լեհաստան) ՀԿ-ի հետ համատեղ, Եվրամիության «Էրազմուս+» ծրագրի շրջանակներում հունիսի 22-29-ը Դիլիջանում հյուրընկալեց «Green Me!» միջազգային երիտասարդական փոխանակման ծրագրի երկրորդ փուլը՝ բնապահպանության և ակտիվ քաղաքացիության թեմայով, որին մասնակցեցին 22 երիտասարդ մասնակիցներ և 3 թիմի առաջնորդներ:

Ծրագրի առաջին փուլը տեղի էր ունեցել 2025 թվականի ապրիլի 12-19-ը Լեհաստանում:

Ծրագրի հայաստանյան փուլի ընթացքում հայ և լեհ մասնակիցները հնարավորություն ունեցան աշխատել միասին բնության գրկում, այցելել տարբեր ժամանցային և պատմամշակութային վայրեր, ծանոթանալ միմյանց մշակույթներին և ձևավորել ամուր ընկերություն: Մասնակիցները նաև այցելություն ունեցան Դիլիջանի «ԴՈՒԿՈ» երիտասարդական կենտրոն, որտեղ հնարավորություն ունեցան կամավորական աշխատանք կատարելու և կենտրոնի բակում ծառեր տնկելու:



When: 22 – 29 June 2025

Where: Dilijan, Armenia

Aim: To promote tolerance, honesty, healthy competition and teamwork among participants perceiving nature as a means of shaping, spreading and promoting these values.

Description: "Youth Initiative Centre" (YIC) NGO in cooperation with “Centrum Edukacji i Pracy Mlodzieży OHP w Lublinie” (Poland) hosted the second phase of the international youth exchange “Green Me!” from 22-29 June on the topics of environment and active citizenship in Dilijan within the framework of Erasmus+ programme of the EU. The youth exchange was attended by 22 young participants and 3 team leaders.

The first phase of the programme took place in Poland from 12-19 April, 2025.

During the Armenian phase, participants from Armenia and Poland had the opportunity to work together in nature, visit various entertainment and cultural, historical sites, explore each other’s cultures and build strong friendships. The participants also visited the “DUCO” youth center in Dilijan, where they had the opportunity to do volunteer work and plant trees in the yard of the center.















«Հայ-վրացական երիտասարդական հավաք»

“Armenia-Georgia Youth Gathering”

Երբ. 09 – 11 հուլիս 2025 թ.

Որտեղ. Ապարան, Հայաստան

Նպատակ. Ամրապնդել Հայաստանի և Վրաստանի երիտասարդների միջև համագործակցությունն ու երկխոսությունը՝ միջմշակութային փոխանակման, առաջնորդության հմտությունների և երիտասարդների քաղաքացիական մասնակցության բարձրացման միջոցով:

Նկարագրություն. «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (ԿԳՄՍ) նախարարության ֆինանսական աջակցությամբ, հուլիսի 9-11-ը, ՀՀ 2025 թվականի «Երիտասարդական մայրաքաղաք» Ապարանում, իրականացրեց «Հայ-վրացական երիտասարդական հավաք»:

Երիտասարդական հավաքին մասնակցում էին 16-20 տարեկան ակտիվ երիտասարդներ Հայաստանից և Վրաստանից:
Հայ մասնակիցներն ընդգրկվել էին ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ Ապարան, Արարատ, Ախուրյան, Ծովագյուղ, Իջևան, Դիլիջան և Կապան համայնքներում հիմնված երիտասարդական կենտրոններից, ինչպես նաև ԵՆԿ ՀԿ-ի կողմից Գյումրի, Արթիկ, Գավառ, Արմավիր և Էջմիածին համայնքներում գործարկվող «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոններից:

Ծրագրի ընթացքում երիտասարդները հնարավորություն ունեցան մասնակցելու ոչ-ֆորմալ կրթական աշխատարանների, խմբային քննարկումների, ինտերակտիվ վարժանքների, կազմակերպեցին միջմշակութային երեկո՝ միմյանց ներկայացնելով Հայաստանի և Վրաստանի մշակութային առանձնահատկությունները, ինչպես նաև այցելություն ունեցան Հայաստանի պատմամշակութային վայրեր՝ Սաղմոսավանք և Հովհաննավանք:
Երիտասարդական հավաքի ընթացքում մասնակիցները հնարավորություն ունեցան անդրադառնալու այնպիսի թեմաների, ինչպիսիք են առաջնորդությունը, երիտասարդների քաղաքացիական ակտիվությունն ու մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներում:

Երիտասարդական հավաքի երրորդ օրն ամփոփվեց ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանի այցելությամբ:
Ողջունելով հավաքի մասնակիցներին՝ Ժաննա Անդրեասյանը կարևորեց հայ և վրացի պատանիների ու երիտասարդների միջև հաղորդակցման, գիտելիքների ու փորձի փոխանակման, ինչպես նաև միջմշակութային կապերի ձևավորման կարևորությունը:
Հաջորդիվ տեղի ունեցավ «Երիտասարդական քաղաքականությունը Հայաստանում և Վրաստանում, երիտասարդների դերը որոշումների կայացման գործընթացներում» թեմայով պանելային քննարկումը:
Քննարկմանը մասնակցեցին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը, Վրաստանի կրթության, գիտության և երիտասարդության նախարարի տեղակալ Բայա Կվիցիանին, Արագածոտնի մարզպետի տեղակալ Արմեն Գրիգորյանը, Ապարան համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արկադի Կարապետյանը, «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի նախագահ Արթուր Նաջարյանը և երիտասարդական հավաքի մասնակիցները Հայաստանից ու Վրաստանից:

Ծրագրի ավարտին վկայագրեր և շնորհակալագրեր հանձնվեցին երիտասարդ մասնակիցներին, թիմի առաջնորդներին և երկու երկրների պատվիրակությունների ղեկավարներին:

When: 09 – 11 July 2025

Where: Aparan, Armenia

Aim: To strengthen cooperation and dialogue between the youth of Armenia and Georgia through intercultural exchange, leadership skills development and enhancement of civic engagement among young people.

Description: "Youth Initiative Centre" (YIC) NGO with the financial support of the Ministry of Education, Science, Culture and Sports of the Republic of Armenia, implemented “Armenia-Georgia Youth Gathering” in Aparan on 9-11 July 2025, which has been declared as the Youth Capital of Armenia for 2025.

The Youth Gathering brought together active young people aged 16–20 from Armenia and Georgia. The Armenian participants were selected from the youth centres established in the communities of Aparan, Ararat, Akhuryan, Tsovagyugh, Ijevan, Dilijan and Kapan with the support of the Ministry of Education, Science, Culture and Sports of Armenia, as well as from the "Youth House" open youth centres operating in Gyumri, Artik, Gavar, Armavir and Ejmiatsin, run by YIC NGO.

During the project, the young people had the opportunity to take part in non-formal educational workshops, group discussions and interactive activities. They also organized an intercultural evening, where they presented the cultural characteristics of Armenia and Georgia to one another. Additionally, they visited historical and cultural sites of Armenia Saghmosavank and Hovhannavank.

Throughout the Youth Gathering, the participants had the chance to get engaged in discussions on the topics such as leadership, civic engagement and youth participation in decision-making processes.

The third day of the Youth Gathering concluded with the visit of the Minister of Education, Science, Culture and Sports of the Republic of Armenia Zhanna Andreasyan. Welcoming the participants, Zhanna Andreasyan emphasized the importance of communication, exchange of knowledge and experiences, as well as the development of intercultural ties between Armenian and Georgian youth.

Afterwards, a panel discussion was held on the topic of "Youth Policy in Armenia and Georgia, the Role of Young People in Decision-Making". Deputy Minister of Education, Science, Culture and Sports of Armenia Mr. Artur Martirosyan, Deputy Minister of Education, Science and Youth of Georgia Mrs. Baia Kvitsiani, Deputy Governor of Aragatsotn Region Armen Grigoryan, First Deputy Mayor of Aparan community Arkadi Karapetyan, President of “Youth Initiative Centre" NGO Artur Najaryan and participants of Youth Gathering from Armenia and Georgia were invited as guest-speakers.

At the conclusion of the project, certificates of appreciation were awarded to the young participants, team leaders and heads of the delegations from both countries.




ARMENIA-GEORGIA
YOUTH CENTER






YIC



Արշավներ ԵՆԿ-ի հետ

Hiking with YIC

Երբ. 01 մարտ - 01 նոյեմբեր 2025 թ.

Որտեղ. Լոռի և Վայոց ձոր, Հայաստան

Նպատակ. Բացահայտել Հայաստանի պատմամշակութային տեսարժան վայրերը, խթանել երիտասարդների ֆիզիկական առողջությունը՝ ճանաչողական արշավների միջոցով:

Նկարագրություն. «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն պարբերաբար կազմակերպում է ճանաչողական արշավներ, որոնց նպատակն է բացահայտել Հայաստանի պատմամշակութային ժառանգություններն ու տեսարժան վայրերը: Լավ մշակված երթուղիով հիանալի թիմով արշավային միջոցառումները անմոռանալի փորձ են դառնում բոլոր մասնակիցների համար՝ վերջիններիս հնարավորություն տալով ձեռք բերել նոր կապեր:

2025 թվականին կազմակերպությունը նախաձեռնել է 2 արշավ՝ Լոռու և Վայոց ձորի մարզեր, որոնց մասնակցել է 60-ից ավել արշավասեր: Լոռու մարզում արշավական ուղղությունը հասցրել է մինչև Ախթալայի վանական համալիր, իսկ Վայոց ձորում՝ առողջարանային Ջերմուկ: Արշավների հիշարժան պահերը կարող եք տեսնել հետևյալ հղումով՝

https://www.facebook.com/media/set/?set=a.1131778585660700&type=3



When: 01 March - 01 November 2025

Where: Lori and Vayots dzor, Armenia

Aim: Discover the historical and cultural sights of Armenia, promote the physical health of young people through cognitive hikings.

Description: "Youth Initiative Centre" (YIC) NGO regularly organises hiking trips and excursions the purpose of which is to reveal the historical and cultural heritage and attractions of Armenia. With a well-planned route and a great team, hiking events become an unforgettable experience for all participants giving them the opportunity to make new connections.

In 2025, YIC team initiated 2 hiking trips in Lori and Vayots Dzor regions with more than 60 hikers participating. In Lori region, the hiking route extended to the Akhtala monastery complex, and in Vayots Dzor, to the resort town of Jermuk.
You can see the memorable moments of the hikings at the following link:

https://www.facebook.com/media/set/?set=a.1131778585660700&type=3





«Եվրաակումբ Գյումրի»

“EuroClub Gyumri”

Երբ. 01 հունվարի – 31 դեկտեմբերի 2025 թ.

Որտեղ. Շիրակ, Հայաստան

Նպատակ. Երիտասարդների շրջանում բարձրացնել ԵՄ կողմից ընձեռնված հնարավորությունների և միջոցառումների վերաբերյալ տեղեկացվածությունը՝ թեմատիկ միջոցառումների, նախաձեռնությունների և հանդիպումների միջոցով:

Նկարագրություն. Աշխատանքային տարվա ընթացքում իրականացվել են տեղեկատվական հանդիպումներ տարբեր համալսարաններում և երիտասարդական կենտրոններում, ներառյալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղում և Վանաձորի պետական համալսարանում:

Մարտի 8-ին Եվրաակումբ Գյումրիի անդամներն այցելել են Գյումրի քաղաքում բնակվող և գործունեություն ծավալող լիբանանահայ խաչքարագործ Նարինե Փոլադյանին: Այցի նպատակն էր ԵՄ Արևելյան գործընկերության երկրների սոցիալական մեդիայում պատմել Նարինեի գործունեության մասին:

Մայիսի 6-ին «Եվրոպայի օր 2026» միջոցառումների շրջանակներում կազմակերպվել է համաքաղաքային քվեսթ, որին մասնակցել են ՀՀ-ում ԵՄ պատվիրակության ղեկավար Վասիլիս Մարագոսը և Հայաստանում այլ ԵՄ անդամ պետությունների դեսպաններ:

Հուլիսի 3-ին Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոնի «ԲայքԼայֆ ՍՁ»-ի հետ համագործակցության Արթիկ համայնքում կազմակերպվել է հեծանվաարշավ: Հեծանվորդները «Արթիկի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնից գնացել են Հառիճավանք և հետ վերադարձել: Հեծանվաարշավի նպատակն էր երիտասարդների շրջանում խրախուսել առողջ ապրելակերպն ու էկո մտածելակերպը:

Հոկտեմբերի 10-ին «Հոգեկան առողջության միջազգային օրվա» շրջանակներում կազմակերպվել է հանդիպում հոգեբան Քրիստինա Բաղդասարյանի հետ: Հանդիպման նպատակն էր երիտասարդների շրջանում բարձրացնել հոգեկան առողջության և ինքնախնամքի կարևորությունը գործնական վարժությունների և արտ թերապիայի միջոցով:

Նոյեմբերի 21-ին, միանալով «Մեդիագրագիտության շաբաթ»-ին, հյուրընկալել ենք մեդիագրագիտության փորձագետ Անի Եղիազարյանին, ով տեղի երիտասարդների հետ խոսել է մեդիագրագիտության կարևորության մասին՝ տեղեկատվական հոսքի և կեղծ տեղեկատվության հսկայական քանակի պայմաններում:

«Եվրաակումբ Գյումրիի» գործունեության համակարգումն իրականացնում է «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն «Երիտասարդ եվրոպական դեսպաններ» (ԵԵԴ) նախաձեռնության հետ համագործակցությամբ:



When: 01 January - 31 December 2025

Where: Shirak, Armenia

Aim: To raise awareness among young people about the opportunities and activities provided by the EU through thematic events, initiatives, and different activities.

Description: During the working year, informational meetings were held at various universities and youth centers, including the ASUE Gyumri branch and Vanadzor State University.

On March 8, Euroclub Gyumri members visited with Narine Poladyan, a Lebanese-Armenian khachkar maker living and working in Gyumri. The goal of the visit was to share Narine's activities on social media in the EU Neighbours East countries.

On July 3, a bicycle ride was organized in the Artik community in cooperation with BikeLife IE. The cyclists went from the “Artik Youth House” open youth centre to Harichavank and back. The goal of the bike ride was to encourage a healthy lifestyle and eco-mindedness among young people.

On October 10, within the framework of the "World Mental Health Day", a meeting with psychologist Kristina Baghdasaryan was organized at the YIC NGO office. The goal of the meeting was to raise awareness of the importance of mental health and self-care among young people through practical exercises and art therapy.

On November 21, joining the "Media Literacy Week", we hosted media literacy expert Ani Yeghiazaryan at the YIC NGO office, who spoke to local youth about the importance of media literacy in the face of the huge amount of information flow and fake information.

The coordination of the activities of "Euroclub Gyumri" is carried out by Gyumri Youth Initiative Centre NGO in cooperation with the Young European Ambassadors (YEAs) Initiative.





«Երիտասարդների հզորացում հանուն հաջողության»

Youth Empowerment for Success

Երբ. 01 հուլիս 2024 թ. - 31 դեկտեմբերի 2027 թ.

Որտեղ. Շիրակ, Տավուշ, Հայաստան

Նպատակ. Բարելավել ՀՀ Շիրակի և Տավուշի մարզերում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 400 երիտասարդի (17-35 տարեկան) սոցիալ-տնտեսական վիճակը՝ զբաղունակության և ձեռներեցության ներուժի, պետական և ոչ պետական կառույցների կարողությունների զարգացման միջոցով:

Նկարագրություն. Ծրագրի շրջանակներում մշակվել է «Երիտասարդական տարածքի աշխատանքային մոդել» փաստաթուղթը, որը օգտագործվելու է Գյումրիում և Իջևանում ստեղծված երկու երիտասարդական տարածքների աշխատանքները կազմակերպելու համար:

2025 թվականի մարտ ամսին Շիրակի և Տավուշի մարզերից ընտրվել են ընդհանուր 12 նորաստեղծ ՔՀԿ-ներ, որոնց ներկայացուցիչներն անցել են երիտասարդական աշխատանքի, երիտասարդական քաղաքականության և երիտասարդների մասնակցության թեմաներով վերապատրաստումներ:
Առաջին վերապատրաստումն իրականացվել է հուլիս-օգոստոս ամիսներին, որին մասնակցել է ընտրված կազմակերպություններից 24 ներկայացուցիչ:
Երկրորդ վերապատրաստումը տեղի է ունեցել դեկտեմբեր ամսին՝ ծրագրերի մշակում, ղեկավարում և ֆոնդհայթհայթում թեմաներով: Վերապատրաստմանը մասնակցել են 12 ներկայացուցիչներ:

Նոյեմբերի 2-4-ը Գյումրի քաղաքում տեղի է ունեցել «Համայնքային կազմակերպիչների» դասընթացը, որին մասնակցել է 30 երիտասարդ Շիրակի և Տավուշի մարզերից: Դասընթացից հետո նրանցից 6-ն ընտրվելու են և իրականացնելու են իրենց կողմից մշակված համայնքային նախաձեռնությունները:

Ծրագիրն իրականացնում է «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպությունը «UOU-Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի հետ համատեղ՝ Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության և Գերմանիայում Հերման Գմայների հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ:



When: 01 July 2024 – 31 December 2027

Where: Shirak, Tavush, Armenia

Aim: Improving the socio-economic situation of 400 vulnerable young people (aged 17-35) in the Shirak and Tavush regions, through the development of employability and entrepreneurship potential, and the capacity of state and non-governmental institutions.

Description: Within the framework of the project, the "Youth Space Working Model" document was developed, which will be used to organize the work of the two youth spaces created in Gyumri and Ijevan.

In March 2025, a total of 12 newly established CSOs were selected from Shirak and Tavush regions, whose representatives underwent a series of trainings, the topics of which were: youth work, youth policy and youth participation
The first training was conducted in July-August, the number of participants was 24
The second training took place in December, on the topics of project development and management and fundraising, 12 representatives participated in the training.

From November 2 to 4, the "Community Multipliers" training took place in the city of Gyumri, in which 30 young people from Shirak and Tavush regions participated. After the training, 6 of them will be selected and will implement the community initiatives they developed.

The program is implemented by the "Youth Initiative Centre" NGO in collaboration with the "SOS Children's Villages" Armenian Charitable Foundation with the financial support of the German Federal Ministry for Economic Cooperation and Development and the Hermann Gmeiner Foundation in Germany.





«ԵՄ-ն հանուն կանանց և տղամարդկանց իրավահավասարության. Միասին ընդդեմ գենդերային կարծրատիպերի և բռնության»

"EU4 Gender Equality. Together against gender stereotypes and violence"

Երբ. 1 հունիս 2025 թ. - 31 օգոստոս 2025թ. և 1 նոյեմբեր 2025 թ. - 31 դեկտեմբեր 2025 թ.

Որտեղ. Գյումրի, Վանաձոր, Իջևան, Հայաստան

Նպատակ. Ամրապնդել կանանց և տղամարդկանց հավասար իրավունքներն ու հնարավորությունները՝ կանանց ու տղամարդկանց դերերի հանրային ընկալումները փոխելու, գենդերային կարծրատիպերը հաղթահարելու և երեխաների խնամքի, ծնողավարման մեջ տղամարդկանց մասնակցությունը խթանելու միջոցով:

Նկարագրություն. 2025 թվականի ծրագրի գործունեության շրջանակներում կազմակերպվել է՝

- 2 «Կարողությունների զարգացման դասընթաց» «Հայրիկների ակումբի» ֆասիլիտատորների և «Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ-ի ֆասիլիտատորների համար,
- 24 «Հայրիկների ակումբ» հանդիպում-քննարկումներ, որին մասնակցել են 72 երիտասարդ տղամարդիկ և հայրիկներ,
- 6 թեմատիկ հանդիպումներ, որից երկուսն անցկացվել է Վանաձորի քրեակատարողական հիմնարկի կալանավորների համար, անցկացվել է Հայաստանում Հայրերի օրը, մեկ թեմատիկ հանդիպման շրջանակներում Գյումրիում իրականացվել է երաժշտական ներկայացում՝ նվիրված կանանց և տղամարդկանց գենդերային իրավահավասարությանը՝ տղամարդկանց ներգրավվածությանը ընտանեկան կյանքում և երեխաների դաստիրակության հարցում: Ներգրավված է եղել 247 մասնակից,
- 1 հանրային միջոցառում՝ նվիրված 2025 թվականի «Հայրիկների ակումբի» ամփոփմանը, որին մասնակցել է 60 մասնակից,
- 4 տեսանյութերի նկարահանում, որին մասնակցել են «Հայրիկների ակումբի» 20 մասնակից և նրանց ընտանիքի անդամները:





When: 1 June 2025 – 31 August 2025 and 1 November 2025 – 31 December 2025 (two semesters)

Where: Gyumri, Vanadzor, Ijevan, Armenia

Aim: The main goal of the program is to strengthen equal rights and opportunities for women and men by changing public perceptions of gender roles, overcoming gender stereotypes, and promoting men's participation in childcare and parenting.

Description: Within the framework of the 2025 program activities, the following were implemented:

- Two Capacity-Building Trainings for facilitators of the "Fathers' Club" and facilitators of the NGO Agate Center for the Protection of the Rights of Women with Disabilities;
- Twenty-four (24) "Fathers' Club" discussion meetings, involving seventy-two (72) young men and fathers;
  Six (6) thematic meetings, including: two conducted for inmates of the Vanadzor Penitentiary Institution, one dedicated to the celebration of Father's Day in Armenia, one thematic meeting in Gyumri that featured a musical performance dedicated to gender equality between women and men, men's involvement in family life, and child upbringing. A total of two hundred forty-seven (247) participants were engaged;
- One public event dedicated to summarizing the 2025 "Fathers' Club" activities, with the participation of sixty (60) attendees;
- Production of four (4) video materials, involving twenty (20) "Fathers' Club" participants and their family members.















Երիտասարդական կենտրոնների և երիտասարդական տարածքների ստեղծում և ամրապնդում Հայաստանում

Creating and Strengthening Youth Centers and Youth Spaces in Armenia

Երբ. 23 մայիս 2025 թ., Վաղարշապատ համայնքի հետ համագործակցության հուշագրի ստորագրում
7 հուլիս 2025 թ., Անի համայնքի հետ համագործակցության հուշագրի ստորագրում

Որտեղ. Վաղարշապատ համայնք, Անի համայնք

Նպատակ. Ստեղծել անվտանգ, գրավիչ և ոգեշնչող երիտասարդական տարածքներ, որտեղ երիտասարդները կարող են ստեղծագործել, զարգացնել իրենց հմտությունները, շփվել և ակտիվորեն ներգրավվել համայնքային կյանքում՝ օգտվելով տարբեր ռեսուրսներից, ծառայություններից և հնարավորություններից:

Նկարագրություն. Երիտասարդական տարածքները երիտասարդական աշխատանքի սկզբունքներով գործող անվտանգ և գրավիչ ֆիզիկական միջավայրեր են, որոնք համալրված են անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով: Դրանք երիտասարդներին հնարավորություն կտան ստեղծագործելու, նոր գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու, շփվելու և ինտելեկտուալ ժամանց կազմակերպելու համար:

Երիտասարդական տարածքները նպատակաուղղված են 13-35 տարեկան երիտասարդների քաղաքացիական ակտիվության բարձրացմանը, նրանց կարողությունների և սոցիալական հմտությունների զարգացմանը, բարեկեցության խթանմանը, ինչպես նաև տարբեր ռեսուրսների, ծառայությունների և հնարավորությունների հասանելիության ապահովմանը:

Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն իրականացնելու է երիտասարդական տարածքների կահավորման և նյութատեխնիկական հագեցման աշխատանքները, ապահովելու է երիտասարդների համար նախատեսված պարագաներով, զարգացնող խաղերով, ուսումնական և տեղեկատվական նյութերով, ինչպես նաև անվտանգության և տեսանկարահանման սարքավորումներով: Բացի այդ, կազմակերպությունը կիրականացնի տարածքների համակարգողների վերապատրաստում և անհրաժեշտ գործառնական փաստաթղթերի մշակում:



When: May 23, 2025 – Signing of the Memorandum of Understanding with Vagharshapat Community
July 7, 2025 – Signing of the Memorandum of Understanding with Ani Community

Where: Vagharshapat Community, Ani Community

Aim: To establish safe, attractive, and inspiring youth spaces where young people can develop their skills, express their creativity, build social connections, and actively participate in community life while gaining access to resources, services and opportunities.

Description: The youth spaces will serve as safe and youth-friendly physical environments operating in accordance with the principles and methodologies of youth work and equipped with the necessary logistical resources. These spaces will provide young people with opportunities for learning, creativity, interaction, self-expression, and meaningful intellectual leisure.

The initiative aims to strengthen civic engagement among young people aged 13-35, support the development of their capacities and social skills, promote their well-being, and improve their access to educational, developmental, and community opportunities.

Within the framework of the initiative, Gyumri "Youth Initiative Centre" NGO will be responsible for furnishing and equipping the youth spaces, providing educational and operational materials, installing developmental games as well as safety and surveillance equipment, training the youth space coordinators, and developing the necessary operational and methodological documentation.





ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ

ՆՊԱՍՏԵԼ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆԸ

ԽՆԴԻՐՆԵՐ

2.1. Բարձրացնել երիտասարդների մրցունակությունն աշխատաշուկայում:

2.2. Աջակցել երիտասարդների ձեռնարկատիրական կարողությունների զարգացմանը և իրացմանը:

2.3. Խթանել երիտասարդների նախաձեռնողականությունը:

2.4. Զարգացնել կամավորության մշակույթը երիտասարդության շրջանում:

STRATEGIC AIM

CONTRIBUTE TO THE IMPROVEMENT OF THE SOCIAL-ECONOMIC CONDITIONS FOR THE YOUTH

OBJECTIVES

2.1. To develop a culture of volunteerism among young people.

2.2. To increase the competitiveness of young people in the labour market.

2.3. To support the development and realization of youth entrepreneurial skills.

2.4. To promote the spirit of initiative among the youth.

Ակումբներ

Clubs

Երբ. Փետրվար-դեկտեմբեր 2025 թ.

Որտեղ. Գյումրի, Հայաստան

Նպատակ. «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» (ԵՆԿ) ՀԿ-ի գործունեության ուղղություններից է, որի նպատակն է՝ լեզվի ակումբների կազմակերպման միջոցով նպաստել երիտասարդների լեզվական հաղորդակցման հմտությունների զարգացմանը:

Նկարագրություն. 2025 թվականի ընթացքում ԵՆԿ-ում գործել են անգլերենի խոսակցական, սկսնակ և միջին, ինչպես նաև ֆրանսերենի միջին մակարդակի ակումբներ, որոնց մասնակցել է 48 երիտասարդ:
Անգլերենի խոսակցական ակումբը վարել են ԱՄՆ Խաղաղության կորպուսի կամավորներ Մարկ Քլենսին և Մերի Ֆոգ-Լիդիելը, անգլերենի սկսնակ և միջին մակարդակի ակումբները՝ ԵՆԿ ՀԿ կամավորներ և կամավորներ Ամալյա Պետրոսյանը և Անի Մովսիսյանը, իսկ ֆրանսերենի միջին մակարդակի ակումբը՝ միջազգային կամավոր Մաթիաս Ֆրանկոն:

Սկսնակ և միջին անգլերենի, ինչպես նաև ֆրանսերենի միջին մակարդակի ակումբների ավարտին բոլոր մասնակիցները ստացել են հավաստագրեր:





When: February–December 2025

Where: Gyumri, Armenia

Aim: The clubs are one of the activities of the "Youth Initiatives Centre" NGO aimed at fostering the development of language communication skills among young people through the establishment of language clubs.

Description: During 2025, conversational, beginner and intermediate English clubs, as well as an intermediate French club operated at YIC, with a total of 48 young people participating.
The conversational English club was led by U.S. Peace Corps volunteers Mark Clancy and Mary Fogg-Liedel; the beginner and intermediate English clubs were facilitated by young professionals and YIC volunteers Amalya Petrosyan and Ani Movsisyan; and the intermediate French club was led by international volunteer Mathias Franco.

Upon completion of the beginner and intermediate English clubs, as well as the intermediate French club, all participants received certificates.










My name is...
I am from...
I live in...
My favorite color is...
My hobby is.../My hobbies are...
I study at...







Աշխատանքային և ուսումնական պրակտիկա

Work and educational internship

Երբ. Հունվար-դեկտեմբեր 2025 թ.

Որտեղ. Գյումրի, Արմավիր, Էջմիածին, Գավառ, Արթիկ

Նկարագրություն. «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն աշխատանքային և ուսումնական պրակտիկայի հնարավորություն է ընձեռում երիտասարդներին՝ նպատակ ունենալով նրանց ծանոթացնել երիտասարդական աշխատանքին և դրա տեսակներին՝ որպես սոցիալական աշխատանքի հարակից մասնագիտություն, ինչպես նաև գրասենյակային աշխատանքին և դրա գործիքակազմին:

Ուսումնական պրակտիկաներն իրականացվել են Շիրակի պետական համալսարանի հետ համագործակցությամբ:

Ուսումնական պրակտիկա. 2025 թվականի ընթացքում ԵՆԿ գրասենյակում և «Գյումրու երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնում ուսումնական պրակտիկա է անցել 27 ուսանող:

Աշխատանքային պրակտիկա. 2025 թվականի ընթացքում ԵՆԿ գրասենյակում և կազմակերպության բաց երիտասարդական կենտրոններում՝ Գյումրիում, Արթիկում, Էջմիածնում, Արմավիրում և Գավառում, աշխատանքային պրակտիկա է անցել 12 երիտասարդ:





When: January-December 2025

Where: Gyumri, Armavir, Ejmiatsin, Gavar, Artik

Description: "Youth Initiative Centre" NGO offers work and educational internship opportunities for young people, aiming to familiarize them with youth work and its various aspects as a related profession to social work, as well as office work and its toolkit.

YIC has collaborated with Shirak State University in the frames of educational internships.

Educational internship: During 2025, 27 students had internships at the office of YIC and the "Gyumri Youth House" open youth centre.

Work internship: During 2025, 12 young people had internships at YIC office and the "Youth House" open youth centres of YIC (Gyumri, Ejmiatsin, Artik, Armavir and Gavar).







«Երիտասարդության միջազգային օր» 2025

“International Youth Day” 2025

Երբ. 11-12 օգոստոս 2025 թ.

Որտեղ. Գյումրի, Ապարան, Գավառ, Վաղարշապատ

Նկարագրություն. «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն, շարունակելով Երիտասարդության միջազգային օրը մեծ տոնախմբությամբ նշելու ավանդույթը, 2025 թվականի միջոցառումներն իրականացրել է չորս քաղաքներում՝ օգոստոսի 11-ին Գյումրիում, օգոստոսի 12-ին՝ Գավառում և Ապարանում՝ որպես ՀՀ երիտասարդական մայրաքաղաք, իսկ օգոստոսի 12-14-ը՝ Վաղարշապատում:

Երիտասարդության միջազգային օրվան ընդառաջ իրականացվել է մեդիա և իրազեկման արշավ՝ սոցիալական մեդիայի հրապարակումների, տեսանյութերի, ինչպես նաև Գյումրիում թռուցիկների և տեղեկատվական նյութերի տարածման միջոցով: Օգոստոսի 11-ին կազմակերպվել է նաև մամուլի ասուլիս և մեդիա ոչ-ֆորմալ հանդիպում՝ ներկայացնելու Գյումրիում նախատեսված միջոցառումները:

Գյումրիում միջոցառումները մեկնարկել են թատերական հրապարակում անցկացված «ՄԻՍՍԻԱ 17» ՔՎԵՍՏ-ով, որը վարել են Եվրոպական համերաշխության կորպուս ծրագրի շրջանակներում Գյումրիում հյուրընկալված 5 երկրների 20 միջազգային կամավորներ: Քվեստը նվիրված էր ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներին, և մասնակիցները, հաղթահարելով փորձություններն ու հավաքելով խճանկարի կտորները, միասին ձևավորել են ԿԶՆ 17 նպատակներն արտացոլող մեծ խճանկար: Զուգահեռաբար «Եվրոպական համերաշխության կորպուս» ծրագրի շուրջ 30 շրջանավարտ կամավորներ երիտասարդներին և անցորդներին ներկայացրել են «Էրազմուս+ Երիտասարդություն» և «Եվրոպական համերաշխության կորպուս» ծրագրերի հնարավորությունները:

Հաջորդիվ, «Գայլուկ» ընկերության հետ համագործակցությամբ, իրականացվել է «ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ՇԱՐԺՄԱՆ ՄԵՋ» սպորտային-ժամանցային միջոցառումը, իսկ օրվա ավարտին տեղի է ունեցել տոնական բացօթյա համերգ՝ «YereOne Project» բենդի և «DJ STAVROS»-ի մասնակցությամբ: Համերգի ընթացքում Գյումրու քաղաքապետարանի կողմից պատվոգրերով պարգևատրվել են «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի և «Գյումրու երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի երիտասարդական աշխատող Արտաշես Հարությունյանը, ինչպես նաև կամավորներ և ակտիվ երիտասարդներ Ալլա Տոնոյանը, Ռաֆիկ Թադևոսյանը և Հովսեփ Սիմոնյանը:



When: 11-12 August 2025

Where: Gyumri, Aparan, Gavar and Vagharshapat

Description: Continuing the beautiful tradition of celebrating the International Youth Day with large-scale celebrations, in 2025 “Youth Initiative Centre” NGO (YIC) organised events in four different cities across Armenia: in Gyumri on 11 August, in Gavar and Aparan - the Youth Capital of Armenia 2025 - on 12 August, and in Vagharshapat from 12 to 14 August.

Prior to the International Youth Day events, a media and awareness raising campaign was carried out through social media publications, videos, as well as the distribution of flyers and informational materials in Gyumri. On 11 August, a press conference and a non-formal media meeting were also organised to present the programme of events planned in Gyumri to media representatives.

The events in **Gyumri** started at the Theatre Square with the “MISSION 17” Quest led by 20 international volunteers from 5 countries hosted in Gyumri within the framework of the European Solidarity Corps (ESC) programme. The quest was dedicated to the UN Sustainable Development Goals (SDGs), and participants, by completing challenges and collecting puzzle pieces, jointly created a large mosaic reflecting all 17 SDGs. In parallel, around 30 former ESC volunteers presented the opportunities offered by the Erasmus+ Youth and European Solidarity Corps programmes to young people and passersby.

Later, in cooperation with the “Gayluk” company, the “YOUTH ON THE MOVE” sports and recreational activity was organised, creating an energetic and active environment for young people. The day concluded with an open-air festive concert featuring the “YereOne Project” band and “DJ STAVROS”. During the concert, Gyumri Municipality awarded certificates of appreciation to Artashes Harutyunyan, youth worker of “Youth Initiative Centre” NGO and the “Gyumri Youth House” open youth centre, as well as to active volunteers and young people Alla Tonoyan, Rafik Tadevosyan and Hovsep Simonyan for their contribution and effective work in the youth field.



Օգոստոսի 12-ին միջոցառումները շարունակվել են Հայաստանի երիտասարդական մայրաքաղաք **Ապարանում**, որտեղ կրկին իրականացվել է «ՄԻՍՍԻԱ 17» ՔՎԵՍՏ-ը:

Գյումրիում և Ապարանում միջոցառումներն իրականացվել են Գյումրու քաղաքապետարանի, ՍԱԼՏՈ Արևելյան Եվրոպա և Կովկաս ռեսուրսային կենտրոնի, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի և Հայաստանում «Erasmus+ Երիտասարդություն և Եվրոպական համերաշխության կորպուս» ծրագրերի տեղեկատվական կենտրոնի հետ համատեղ:

Երիտասարդության միջազգային օրվան նվիրված միջոցառումներ են իրականացվել նաև Գավառում և Վաղարշապատում՝ համայնքային երիտասարդների ակտիվ ներգրավմամբ:

Գավառում միջոցառումները կազմակերպվել են «Գավառի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի և Գավառի համայնքապետարանի համագործակցությամբ: «Գավառի երիտասարդների տանը» անցկացվել է ինտելեկտուալ խաղ-մրցույթ, իսկ Գավառի կենտրոնական հրապարակում՝ գունային փարթի և համերգային ծրագիր DJ Smoke-ի մասնակցությամբ: Արդյունքում կենտրոնի 29 երիտասարդներ ներգրավվել են կամավորական աշխատանքներում, 30 երիտասարդ մասնակցել է ինտելեկտուալ խաղ-մրցույթին, իսկ գունային փարթիին և համերգային ծրագրին՝ ավելի քան 250 երիտասարդ:

Վաղարշապատում միջոցառումները կազմակերպվել են «Էջմիածնի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի կողմից՝ Վաղարշապատի համայնքապետարանի աջակցությամբ: Միջոցառումների նպատակն էր խթանել երիտասարդների ակտիվ մասնակցությունը համայնքային կյանքին, առողջ ապրելակերպն ու տեղեկացվածությունը կրթական, զարգացման, կամավորական և մասնակցային հնարավորությունների վերաբերյալ: Միջոցառումներին մասնակցել է համայնքի 318 երիտասարդ, ձևավորվել են նոր կապեր և համագործակցության հնարավորություններ, ինչպես նաև խթանվել է երիտասարդների փոխգործակցությունն ու նախաձեռնողականությունը:





On 12 August, the events continued in **Aparan**, the Youth Capital of Armenia 2025, where the "MISSION 17" Quest was implemented once again.

The events in Gyumri and Aparan were organised by YIC NGO in cooperation with Gyumri Municipality, SALTO Eastern Europe and Caucasus Resource Centre, United Nations Population Fund (UNFPA), and the Info Centre for "Erasmus+ Youth and European Solidarity Corps" Programmes in Armenia.

Events dedicated to International Youth Day were also organised in Gavar and Vagharshapat with the active involvement of local young people.

In **Gavar**, the events were organised in cooperation with the "Gavar Youth House" open youth centre and Gavar Municipality. An intellectual quiz competition was held at the "Gavar Youth House", while a Color Party and concert programme featuring DJ Smoke took place in Gavar's central square. As a result, 29 young people from the centre were involved in volunteer work, 30 young people participated in the intellectual quiz competition, and more than 250 young people joined the Color Party and concert programme.

In **Vagharshapat**, the events were organised by the "Ejmiatsin Youth House" open youth centre with the support of Vagharshapat Municipality. The events aimed to promote young people's active participation in community life, healthy lifestyles, and awareness of educational, development, volunteer, and participation opportunities. A total of 318 young people participated in the events, creating new connections and opportunities for cooperation while also encouraging youth interaction and initiative-taking.






















ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ
ՕԳՈՍՏԻ 12, ՇԱԲԱԹ 2025
IYD






ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ
ՕԳՈՍՏՈՍԻ 11, ԳՅՈՒՄՐԻ 2025
SALTO




TOMMY HILFIGER





«Կամավորների միջազգային օր» 2025

“International Volunteer Day” 2025

Երբ. 04- 05 դեկտեմբեր 2025 թ.

Որտեղ. Գյումրի, Հայաստան

Նկարագրություն. «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն, Հայաստանում «Erasmus+ Երիտասարդություն և Եվրոպական համերաշխության կորպուս ծրագրերի» տեղեկատվական կենտրոնի և Գյումրու համայնքապետարանի հետ համատեղ, դեկտեմբերի 4-ին և դեկտեմբերի 5-ին Գյումրիում իրականացրեց միջոցառումների շարք՝ նվիրված Կամավորների միջազգային օրվան:

Կամավորների միջազգային օրվան ընդառաջ՝ սոցիալական մեդիայում իրականացվեց «ԿԱՄԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԱՆԵԼ, ՈՐՈՎՀԵՏԵՎ ...» խորագրով մեդիա արշավ՝ ներգրավելով պետական, հասարակական, արվեստի, մշակույթի, սպորտի ոլորտների, տեղական և միջազգային կառույցների ներկայացուցիչների, որոշում կայացնողների, ակտիվ երիտասարդների՝ հանդես գալու կամավորության վերաբերյալ իրենց ուղերձներով:

Դեկտեմբերի 4-ին միջոցառումների մեկնարկը տրվեց «Կանաչ տեսլական» խորագրի ներքո Գյումրի քաղաքի Հաղթանակի զբոսայգում իրականացված մաքրության և տարածքի խնամքի աշխատանքներով:
Միջոցառման նպատակ էր խթանել կամավորական շարժումը և հզորացնել համայնքային ներգրավվածությունը, պահպանել ու բարելավել մեր շրջակա միջավայրը, զարգացնել բնության հանդեպ հոգածու վերաբերմունքի մշակույթը՝ հատկապես երիտասարդ սերնդի շրջանում:

Հաջորդիվ «Շրջակա միջավայրը կամավորների աչքերով» խորագրի ներքո անցկացվեց «Բնապահպանություն և կամավորություն երիտասարդների համար» թեմայով վեբինար:
Վեբինարին մասնակցեցին Հայաստանի տարբեր մարզերից ակտիվ երիտասարդները, երիտասարդական աշխատողները և թեմայով հետաքրքրված անձինք, ովքեր տեղեկացան աղբի և թափոնների կառավարման հիմնական մոտեցումների, տեսակավորման նշանակության և դրա կիրառման արդյունավետ ուղիների, էկոլոգիական ոտնահետքը նվազեցնելու պարզ, բայց կարևոր քայլերի, գիտակցված բնապահպանական մտածողության ձևավորման և կամավորական նախաձեռնություններին միանալու հնարավորությունների մասին:

Կամավորների միջազգային օրվան նվիրված միջոցառումները շարունակվեցին դեկտեմբերի 5-ին, որի շրջանակներում Գյումրիում անցկացրեց «ԵՆԿ Տարվա կամավոր» մրցանակաբաշխությունը:

When: 04-05 December 2025

Where: Gyumri, Armenia

Description: ”Youth Initiative Centre” NGO in cooperation with the Info Centre for Erasmus+ Youth and European Solidarity Corps programmes in Armenia and Gyumri Municipality implemented a series of events in Gyumri on the 4th and 5th of December dedicated to the International Volunteer Day.

Prior to the International Volunteer Day social media campaign entitled “TO VOLUNTEER, BECAUSE...” was organized engaging representatives from the state, public sector, civil society, the arts, culture and sports, as well as local and international organizations, decision-makers and active youth to share their messages about volunteering.

On December 4, the launch of events was marked by cleanup and site maintenance activities carried out in Gyumri Victory Park under the theme “Green Vision.”
The event aimed to promote the volunteer movement and strengthen community engagement, to preserve and improve our environment and to develop a culture of care for nature, especially among the younger generation.

Afterwards, a webinar on the topic of “Environmental Protection and Volunteering for Youth” was held under the title “The Environment Through the Eyes of Volunteers”.
Active young people, youth workers and individuals interested in the topic from different regions of Armenia participated in the webinar. The participants got to know such topics as the main approaches to waste and garbage management, the importance of waste sorting and effective ways to implement it, simple yet important steps to reduce one’s ecological footprint, opportunities for developing conscious environmental thinking, opportunities for joining volunteer initiatives.







Արդեն ավանդական դարձած կամավորների ամենամյա պարգևատրման միջոցառման ժամանակ կամավորներին հանձնվեցին շնորհակալագրեր և անվանական տիտղոսներ 2025թ. ընթացքում կազմակերպության ծավալած գործունեության մեջ ունեցած ակտիվ ներգրավվածության և կամավորական աշխատանքների իրականացման համար:
Տիտղոսները տրվեցին «Տարվա կամավոր», «Տարվա միջազգային կամավոր», «Սուպեր միջազգային կամավոր» անվանակարգերում:
Շնորհակալագրեր և վկայականներ հանձնվեցին նաև Երիտասարդության միջազգային օրվան նվիրված միջոցառումների կազմակերպչական աշխատանքներում ներգրավված և «Կամավորների դպրոց»-ի մասնակիցներին:

Մրցանակով պարգևատրվեց նաև «Իմ պատմությունը 100 վայրկյանում» տեսանյութերի մրցույթի հաղթող Արուսյակ Մատինյանը:

Կամավորների միջազգային օրվան նվիրված միջոցառումն ամփոփվեց ոչ-ֆորմալ ժամանցային հավաքույթով:

The events dedicated to the International Volunteer Day continued on the 5th of December in the frames of which "The Volunteer of the Year" award ceremony was held in Gyumri.

During the YIC annual volunteer awards ceremony awards and certificates, as well as certificates of appreciation were given to all volunteers for their active involvement in the activities of the organization and implementation of voluntary work in 2025.
The titles were awarded in the following categories: "Volunteer of the Year", "International Volunteer of the Year", "Super International Volunteer".
The members of the "Volunteers' School" project as well as the volunteers of the International Youth Day events were awarded with the certificates too.

The winner of the video contest "My Story in 100 seconds" Arusyak Matinyan was also awarded with the prize.

The events dedicated to the International Volunteer Day were concluded with a non-formal gathering.











«Միջմշակութային փորձի ձևավորում»

"Building Intercultural Experience"

Երբ. 16 հունվար 2025 թ. – 30 օգոստոս 2025 թ.

Որտեղ. Գյումրի, Հայաստան

Նպատակ. Խթանել երիտասարդների ինքնազարգացումը՝ նրանց հնարավորություն տալով ակտիվ դեր ունենալ հասարակության մեջ կամավորության, հավասարը հավասարին ուսուցման և ոչ-ֆորմալ կրթական գործունեության միջոցով:

Կամավորի անունը. Սվեն Բուխհոլց (Գերմանիա)

Նկարագրություն. Կամավորը վարել է գերմաներեն լեզվի ակումբ «Գյումրու երիտասարդների տանը» և տեղի դպրոցում, պլանավորել, նախապատրաստել և անցկացրել է «Եվրոպական ակումբ» ԵՆԿ ՀԿ-ի Գյումրու, Արթիկի, Արմավիրի, Էջմիածնի և Գավառի «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնների սաների համար:

When: 16 January 2025 - 30 August 2025

Where: Gyumri, Armenia

Aim: To promote self-development of youth empowering them to play an active role in the society through volunteerism, peer-to-peer learning and non-formal educational activities.

Volunteer Name: Sven Buchholz (Germany)

Description: The volunteer planned and ran German language classes in "Gyumri Youth House" open youth centre and at a local school, prepared and organized a "European Club" for the beneficiaries of the Gyumri, Artik, Armavir, Ejmiatsin and Gavar "Youth House" open youth centres of YIC.





«Կարճաժամկետ Եվրոպական համերաշխության կորպուս»

“Short-term European Solidarity Corps”

Երբ. 16 նոյեմբեր 2025 թ. – 13 հունվար 2026 թ.

Որտեղ. Գյումրի, Հայաստան

Նպատակ. Խթանել կամավորությունը և միջմշակութային հաղորդակցությունը՝ հավասարը հավասարին ուսուցման և ոչ-ֆորմալ կրթական գործունեության միջոցով:

Կամավորի անունը. Ռոքսանա Քինյոնեզ Քիսպե (Իտալիա)

Նկարագրություն. Կամավորը պլանավորել և իրականացրել է մի շարք ժամանցային, մշակութային միջոցառումներ՝ մասնավորապես կազմակերպելով «Ուրբաթօրյա սրճարան»-ը Գյումրու, Արթիկի, Արմավիրի, Էջմիածնի և Գավառի «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոններում նոր ձևաչափով և հետաքրքիր գաղափարներով:





When: 16 November 2025 - 13 January 2026

Where: Gyumri, Armenia

Aim: To promote volunteerism and intercultural communication through peer-to-peer learning and non-formal educational activities.

Volunteer Name: Roxana Quinonez Quispe (Italy)

Description: The volunteer planned and implemented various recreational and cultural activities, in particular organizing the “Friday’s Café” in a new format and with creative ideas at the “Youth House” open youth centres of Gyumri, Artik, Armavir, Ejmiatsin and Gavar.





«Ֆրանսիական քաղաքացիական ծառայություն»

“Building Intercultural Experience”

Երբ. 11 հունվար – 16 դեկտեմբեր 2025 թ., 16 հունվար – 23 օգոստոս 2025 թ.

Որտեղ. Գյումրի, Հայաստան

Նպատակ. Երիտասարդներին հնարավորություն տալ ակտիվորեն նպաստել համայնքի զարգացմանը՝ մասնակցելով հասարակությանը օգտակար ծրագրերի, միաժամանակ զարգացնելով իրենց քաղաքացիական պատասխանատվությունն ու գործնական հմտությունները:

Կամավորի անունը. Մաթիաս Ֆրանկո, Սոֆյա Էլ-Արաբի (Ֆրանսիա)

Նկարագրություն. Կամավորները վարել են ֆրանսերեն լեզվի ակումբ Գյումրու և Արթիկի «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոններում, ինչպես նաև Գյումրու թիվ 10 հիմնական և Մ. Նալբանդյանի անվան Շիրակի պետական համալսարանի ավագ դպրոցում, պլանավորել, նախապատրաստել և անցկացրել են մի շարք ժամանցային, մշակութային միջոցառումներ երիտասարդների համար:





When: 11 January - 16 December 2025, 16 January - 23 August 2025

Where: Gyumri, Armenia

Aim: To enable young people to actively contribute to community development by participating in socially beneficial projects while developing their civic responsibility and practical skills.

Volunteer Name: Matthias Franco, Sofia El-Arabi (France)

Description: The volunteers planned and ran French language classes in Gyumri and Artik Youth House open youth centres, as well as at Gyumri secondary school number 10 and at Shirak State University high school after M. Nalbandyan Throughout their service, they prepared and implemented various recreational and cultural activities for the local youth.





ԵՀԿ ուղարկում

«Եվրոպական համերաշխության կորպուս կամավորական ծրագիր»

"European Solidarity Corps Volunteering project"

Երբ. 01 սեպտեմբեր 2025 թ. – 31 օգոստոս 2026 թ.

Որտեղ. Վիլնյուս, Լիտվա

Հյուրընկալող կազմակերպություն. Všį "Vilniaus SOS vaikų kaimas"

Նպատակ. Նպաստել երիտասարդների հմտությունների և կարողությունների զարգացմանը՝ միաժամանակ բարձրացնելով վերջիններիս միջմշակութային իրազեկվածությունը:

Կամավորի անունը. Հարություն Միրիբյան

Նկարագրություն. Կամավորը պլանավորում և իրականացնում է ոչ ֆորմալ կրթական ծրագրեր՝ կազմակերպելով մի շարք աշխատարաններ, ապահովում է երիտասարդների ժամանցը՝ տարբեր խաղերի և միջոցառումների միջոցով, անցկացնում է հայկական մշակույթի երեկոներ:

When: 01 September 2025 – 31 August 2026

Where: Vilnius, Lithuania

Hosting organization: Všį "Vilniaus SOS vaikų kaimas"

Aim: To contribute to the development of skills and competences among young people while simultaneously enhancing their intercultural awareness.

Volunteer Name: Harutyun Miribyan

Description: The volunteer plans and implements non-formal educational activities by organizing different workshops, carries out entertainment activities for young people through various games and events, as well as conducts Armenian cultural evenings.

ԵՀԿ ուղարկում

«Moving forward 3.0»

"Moving forward 3.0"

Երբ. 03 հունիս 2025 թ. – 15 նոյեմբեր 2025 թ.

Որտեղ. Բիդգոշ, Լեհաստան

Հյուրընկալող կազմակերպություն. WSG University in Bydgoszcz

Նպատակ. Նպաստել երիտասարդների հմտությունների և կարողությունների զարգացմանը՝ միաժամանակ փոփոխություններ բերելով տարբեր ոլորտներում, ինչպիսիք են միջազգային հարաբերությունները, դիզայն ստուդիան (մարքեթինգի բաժինը), մանկապարտեզը և լուսանկարչությունը:

Կամավորի անունը. Սամվել Մխիթարյան

Նկարագրություն. Կամավորն աջակցել է թիմին միջազգային ուսանողների համար ինտեգրման, մշակութային և ժամանցային միջոցառումների կազմակերպման գործընթացում, ներգրավվել է կազմակերպության մարքեթինգային թիմում, պատրաստել պոստերներ, տեղեկատվական թերթոններ ԵՀԿ ծրագրերի վերաբերյալ, լուսանկարչական ստուդիայում կազմակերպել է ֆոտո ցուցահանդեսներ և տարբեր աշխատարաններ, ինչպես նաև ներկայացրել սեփական մշակույթը:

When: 03 June 2025 – 15 November 2025

Where: Bydgoszcz, Poland

Hosting organization: WSG University in Bydgoszcz

Aim: To contribute to the development of skills and competences among young people while bringing changes in different areas such as international affairs, design studio (marketing department), nursery and photography.

Volunteer Name: Samvel Mkhitaryan

Description: The volunteer assisted the team with organization of integrative, cultural and entertainment events for international students, was involved in the marketing team of the organization preparing posters and leaflets on ESC programme, organized photo exhibitions and various workshops at the photo studio, as well as presented his own culture.

ԵՀԿ ուղարկում

«Eurobackyards 13»

“Eurobackyards 13”

Երբ. 08 հուլիս 2025 թ. – 26 օգոստոս 2025 թ.

Որտեղ. Բիդգոշ, Լեհաստան

Հյուրընկալող կազմակերպություն. “Wiatrak” Foundation

Նպատակ. Նպաստել միջմշակութային հաղորդակցության և փոխադարձ ըմբռնումի ձևավորմանը տեղի համայնքում:

Կամավորի անունը. Էլիդա Սեդրակյան

Նկարագրություն. Կամավորը պլանավորել և կազմակերպել է ինտերակտիվ, ստեղծագործական և ոչ-ֆորմալ կրթական միջոցառումներ և աշխատարաններ համայնքի երեխաների համար՝ ներկայացնելով հայկական մշակույթը, ավանդույթները և պատմությունը:

When: 08 July 2025 – 26 August 2025

Where: Bydgoszcz, Poland

Hosting organization: “Wiatrak” Foundation

Aim: To promote intercultural dialogue and mutual understanding within the local community.

Volunteer Name: Elida Sedrakyan

Description: The volunteer planned and organized interactive, creative and non-formal educational activities and workshops for the community children presenting Armenian culture, traditions and history.

ԵՀԿ ուղարկում

«Lousame European volunteer project»

“Lousame European volunteer project”

Երբ. 01 հուլիս 2025 թ. – 14 ապրիլ 2026 թ.

Որտեղ. Լոուսամե, Իսպանիա

Հյուրընկալող կազմակերպություն. Concello de Lousame

Նպատակ. Խթանել կամավորության մշակույթը՝ ներգրավելով երիտասարդներին ոչ-ֆորմալ կրթական ծրագրերում:

Կամավորի անունը. Օգսաննա Երիցյան

Նկարագրություն. Կամավորն աջակցում է ճամբարների կազմակերպմանը, տեղեկատվություն տարածում կամավորական հնարավորությունների վերաբերյալ, իրականացնում տարաբնույթ աշխատարաններ և միջոցառումներ:

When: 01 July 2025 – 14 April 2026

Where: Lousame, Spain

Hosting organization: Concello de Lousame

Aim: To promote volunteering culture involving young people into non-formal educational activities.

Volunteer Name: Ogsanna Yeritsyan

Description: The volunteer assists in organization of local camps, provides information on volunteering opportunities, implements various workshops and events.

«Sport and health oriented Kindergarten “Wellenreiter”»

“Sport and health oriented Kindergarten “Wellenreiter””

Երբ. 07 ապրիլ 2025 թ. – 05 մարտ 2026 թ.

Որտեղ. Պոտսդամ, Գերմանիա

Հյուրընկալող կազմակերպություն. LSB SportService Brandenburg gGmbH

Նպատակ. Խթանել երեխաների ֆիզիկական առողջությունը՝ սպորտային խաղերի և ոչ-ֆորմալ կրթական ծրագրերի միջոցով։

Կամավորի անունը. Անահիտ Հակոբյան

Նկարագրություն. Կամավորն աջակցում է տեղի մանկապարտեզի երեխաների հետ առօրյա աշխատանքի կազմակերպմանը, իրականացնում տարբեր սպորտային, ժամանցային միջոցառումներ և կրթական աշխատարաններ։





When: 07 April 2025 – 05 March 2026

Where: Potsdam, Germany


Hosting organization: LSB SportService Brandenburg gGmbH

Aim: To promote children’s physical health through sport and non-formal educational activities.

Volunteer Name: Anahit Hakobyan

Description: The volunteer assists in the daily work with children at the local kindergarten and organizes different sports, entertainment activities and educational workshops.













«ԱՄՆ խաղաղության կորպուս»

“U.S. Peace Corps”

Երբ. Մայիս 2025 թ. - մայիս 2027 թ.

Որտեղ. Արթիկ, Հայաստան

Նպատակ. Նպաստել «Արթիկի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի կազմակերպական զարգացմանը և երիտասարդների հզորացմանը:

Կամավորի անունը. Նիկոլ Ջյաո Ֆեյ Մատոքս (ԱՄՆ)

Նկարագրություն. Կամավորն իրականացրել է ոչ-ֆորմալ կրթական ակումբներ, նպաստել երիտասարդների լեզվական հմտությունների բարելավմանը՝ վարելով անգլերեն լեզվի ակումբ, աջակցել է ճամբարների, միջոցառումների կազմակերպմանը, կազմակերպել աշխատարաններ և դասընթացներ՝ ուղղված երիտասարդների անձնական և մասնագիտական զարգացմանը, ինչպես նաև իրականացրել սեփական նախաձեռնություններ՝ երիտասարդներին ծանոթացնելով ամերիկյան մշակույթի առանձնահատկություններին:





When: May 2025 - May 2027

Where: Artik, Armenia

Aim: To ensure organizational development of “Artik Youth House” open youth centre and youth empowerment.

Volunteer Name: Nicole Xiao Fei Mattox (USA)

Description: The volunteer planned and ran non-formal educational clubs to develop language skills of young people by running the English language classes for the beneficiaries of Artik Youth House, assisted in the organization of summer camps, different events, conducted workshops and trainings on different topics to ensure personal and professional development of young people, as well as implemented her own initiatives presenting the American culture to the youngsters.





«ԱՄՆ խաղաղության կորպուս»

“U.S. Peace Corps”

Երբ. Մայիս 2024 թ. - մայիս 2026 թ.

Որտեղ. Գավառ, Հայաստան

Նպատակ. Նպաստել «Գավառի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի կազմակերպական զարգացմանը և երիտասարդների հզորացմանը:

Կամավորի անունը. Քեյթլին Փաուել (ԱՄՆ)

Նկարագրություն. Կամավորն իրականացրել է ոչ-ֆորմալ կրթական ակումբներ, նպաստել երիտասարդների լեզվական հմտությունների բարելավմանը՝ վարելով անգլերեն լեզվի սկսնակ և միջին մակարդակի ակումբներ, աջակցել է ճամբարների, միջոցառումների կազմակերպմանը, անցկացրել մոմագործության աշխատարաններ, կազմակերպել դասընթացներ՝ ուղղված երիտասարդների անձնական և մասնագիտական զարգացմանը, ինչպես նաև իրականացրել սեփական նախաձեռնություններ՝ երիտասարդներին ծանոթացնելով ամերիկյան մշակույթի առանձնահատկություններին:



When: May 2024 - May 2026

Where: Gavar, Armenia

Aim: To ensure organizational development of “Gavar Youth House” open youth centre and youth empowerment.

Volunteer Name: Kaitlyn Powell (USA)

Description: The volunteer planned and ran non-formal educational clubs to develop language skills of young people by running the English language classes for beginner and intermediate levels, assisted in the organization of summer camps, different events, held candle-making workshops conducted trainings on different topics to ensure personal and professional development of young people, as well as implemented her own initiatives presenting the American culture to the youngsters.





«ԱՄՆ խաղաղության կորպուս»

"U.S. Peace Corps"

Երբ. Մայիս 2025 թ. - մայիս 2027 թ.

Որտեղ. Գյումրի, Հայաստան

Նպատակ. Նպաստել կազմակերպության կազմակերպական զարգացմանը և երիտասարդների հզորացմանը:

Կամավորի անունը. Մերի Ֆոգ-Լիդել (ԱՄՆ)

Նկարագրություն. Կամավորն իր գործունեությամբ աջակցել է կազմակերպական զարգացմանը, ծրագրերի նախագծմանը և իրականացմանը, ներգրավվել է կազմակերպության ընթացիկ ծրագրերում, նպաստել երիտասարդների լեզվական հմտությունների բարելավմանը՝ ԵՆԿ գրասենյակում և «Գյումրու երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնում անցկացնելով անգլերեն լեզվի խոսակցական մակարդակի ոչ-ֆորմալ կրթական ակումբներ:
Վերջինս նաև Գյումրու երիտասարդների տանն իրականացրել է «Առաջնորդության դպրոց» կենտրոնի սաների համար, ինչպես նաև աջակցել է ճամբարների, միջոցառումների կազմակերպմանը:





When: May 2025 - May 2027

Where: Gyumri, Armenia

Aim: To ensure organizational development and youth empowerment.

Volunteer Name: Mary Fogg-Liedel (USA)

Description: The volunteer assisted in the organizational development, project writing and implementation phases, got involved in on-going projects of the organization and contributed to the improvement of language skills of young people by running non-formal conversational English clubs at the YIC office and at the "Gyumri Youth House" open youth centre. She also implemented "Leadership school" for the beneficiaries of Gyumri Youth House as well as assisted in the organization of summer camps and different events.





«Դեպի Հայք»

“Birthright Armenia”

Երբ. Հուլիս – օգոստոս 2025 թ.

Որտեղ. Գյումրի, Հայաստան

Նպատակ. Զարգացնել և ամրապնդել հայրենիքի ու Սփյուռքի երիտասարդների միջև կապերը՝ վերջիններիս հնարավորություն տալով մասնակցել Հայաստանի առօրյա կյանքին և ներդրում ունենալ հայրենիքի զարգացմանը կամավորական աշխատանքի միջոցով, միաժամանակ բարձրացնել Սփյուռքի երիտասարդների ազգային ինքնագիտակցությունը:

Կամավորի անունը. Մաքս դե Փլոգ (Նիդերլանդներ)

Նկարագրություն. Կամավորը պլանավորել, նախապատրաստել և անցկացրել է «Երիտասարդ ակտիվիստի առաջին քայլերը», «Միասին դեպի կայուն Հայաստան», «Հետհայացք դեպի մեր ակունքներ» թեմաներով աշխատարաններ «Գյումրու երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի սաների համար, ինչպես նաև մասնակցել է բակային ճամբարի և Երիտասարդության միջազգային օրվան նվիրված միջոցառումների կազմակերպմանը:

When: July - August 2025

Where: Gyumri, Armenia

Aim: To strengthen ties between the homeland and youth from diaspora, by affording them an opportunity to be a part of Armenia's daily life and to contribute to Armenia's development through work, study and volunteer experiences, while developing life-long personal ties and a renewed sense of Armenian identity.

Volunteer Name: Max de Ploeg (The Netherlands)

Description: The volunteer planned, prepared and conducted workshops for the beneficiaries of the “Gyumri Youth House” open youth centre on the topics of “First Steps of a Young Activist”, “Together Towards a Sustainable Armenia” and “Looking Back at Our Roots”, as well as took part in the organization of the summer camp and events dedicated to International Youth Day.





«Դեպի Հայք»

“Birthright Armenia”

Երբ. 06 մարտ – 03 ապրիլ 2025 թ.

Որտեղ. Գյումրի, Հայաստան

Նպատակ. Զարգացնել և ամրապնդել հայրենիքի ու Սփյուռքի երիտասարդների միջև կապերը՝ վերջիններիս հնարավորություն տալով մասնակցել Հայաստանի առօրյա կյանքին և ներդրում ունենալ հայրենիքի զարգացմանը կամավորական աշխատանքի միջոցով, միաժամանակ բարձրացնել Սփյուռքի երիտասարդների ազգային ինքնագիտակցությունը:

Կամավորի անունը. Արամ Զոբյան (ԱՄՆ)

Նկարագրություն. Կամավորը պլանավորել, նախապատրաստել և անցկացրել է «Ինքնաճանաչում» և «Առողջ կենսակերպ» թեմաներով աշխատարաններ «Գյումրու երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի սաների համար:





When: 06 March - 03 April 2025

Where: Gyumri, Armenia

Aim: To strengthen ties between the homeland and youth from diaspora, by affording them an opportunity to be a part of Armenia's daily life and to contribute to Armenia's development through work, study and volunteer experiences, while developing life-long personal ties and a renewed sense of Armenian identity.

Volunteer Name: Aram Zobyan (USA)

Description: The volunteer planned, prepared and conducted workshops for the beneficiaries of the “Gyumri Youth House” open youth centre on the topics of “Self-awareness” and “Healthy lifestyle”.



«Դեպի Հայք»

“Birthright Armenia”

Երբ. Փետրվար - մայիս 2025 թ.

Որտեղ. Գյումրի, Հայաստան

Նպատակ. Զարգացնել և ամրապնդել հայրենիքի ու Սփյուռքի երիտասարդների միջև կապերը՝ վերջիններիս հնարավորություն տալով մասնակցել Հայաստանի առօրյա կյանքին և ներդրում ունենալ հայրենիքի զարգացմանը կամավորական աշխատանքի միջոցով, միաժամանակ բարձրացնել Սփյուռքի երիտասարդների ազգային ինքնագիտակցությունը:

Կամավորի անունը. Հովիկ Օհանյան (ԱՄՆ)

Նկարագրություն. Կամավորը պլանավորել, նախապատրաստել և անցկացրել է «Վիդեոմոնտաժի» ակումբ «Գյումրու երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի սաների համար:



When: February - May 2025

Where: Gyumri, Armenia

Aim: To strengthen ties between the homeland and youth from diaspora, by affording them an opportunity to be a part of Armenia's daily life and to contribute to Armenia's development through work, study and volunteer experiences, while developing life-long personal ties and a renewed sense of Armenian identity.

Volunteer Name: Hovik Ohanyan (USA)

Description: The volunteer planned, prepared and conducted a video editing club for the beneficiaries of the “Gyumri Youth House” open youth centre.





«Դեպի Հայք»

“Birthright Armenia”


Երբ. Հունիս - օգոստոս 2025 թ.

Որտեղ. Գյումրի, Հայաստան

Նպատակ. Զարգացնել և ամրապնդել հայրենիքի ու Սփյուռքի երիտասարդների միջև կապերը՝ վերջիններիս հնարավորություն տալով մասնակցել Հայաստանի առօրյա կյանքին և ներդրում ունենալ հայրենիքի զարգացմանը կամավորական աշխատանքի միջոցով, միաժամանակ բարձրացնել Սփյուռքի երիտասարդների ազգային ինքնագիտակցությունը:

Կամավորի անունը. Արշակ Կարախանյան (ԱՄՆ)

Նկարագրություն. Կամավորը պլանավորել, նախապատրաստել և անցկացրել է «Գաղափարից դեպի բիզնես» ակումբը «Գյումրու երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի սաների համար:





When: June - August 2025

Where: Gyumri, Armenia

Aim: To strengthen ties between the homeland and youth from diaspora, by affording them an opportunity to be a part of Armenia's daily life and to contribute to Armenia's development through work, study and volunteer experiences, while developing life-long personal ties and a renewed sense of Armenian identity.

Volunteer Name: Arshak Karakhanyan (USA)

Description: The volunteer planned, prepared and conducted the club “From Idea to Business” for the beneficiaries of the “Gyumri Youth House” open youth centre.



«Erasmus+ Երիտասարդություն և Եվրոպական համերաշխության կորպուս» ծրագրերի տեղեկատվական կենտրոն Հայաստանում

Info Centre for Erasmus+ Youth and European Solidarity Corps Programmes in Armenia

Երբ. 01 հունվար – 31 դեկտեմբեր 2025 թ.

Որտեղ. Գյումրի, Հայաստան

Նպատակ. Տրամադրել տեղեկատվություն և խորհրդատվություն երիտասարդներին և երիտասարդական կառույցներին՝ Հայաստանում Եվրամիության «Էրազմուս+ Երիտասարդություն» և «Եվրոպական համերաշխության կորպուս» ծրագրերի ընձեռած հնարավորությունների վերաբերյալ, ինչպես նաև աջակցել շահագրգիռ կողմերին իրենց ծրագրերի իրականացման գործում:

Նկարագրություն. «Erasmus+ Երիտասարդություն և Եվրոպական համերաշխության կորպուս» ծրագրերի տեղեկատվական կենտրոնների ցանցը ստեղծվել է 2017 թ., որը գործում է Արևելյան գործընկերության 6 երկրներում՝ Հայաստանում, Վրաստանում, Ադրբեջանում, Ուկրաինաում, Մոլդովայում, Բելառուսում: Կենտրոնների գործունեության համակարգման իրավասությունը մրցութային կարգով ստանձնում է յուրաքանչյուր երկրի մեկ կազմակերպություն:

Հայաստանում «Erasmus+ Երիտասարդություն և Եվրոպական համերաշխության կորպուս» ծրագրերի տեղեկատվական կենտրոնի գործունեության համակարգման լիազորությունը արդեն իններորդ տարին հանձնվել է «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ին:

Տեղեկատվական կենտրոնի թիրախային խմբերն են՝ երիտասարդները, երիտասարդական կազմակերպությունները, երիտասարդական աշխատողները, երիտասարդական քաղաքականություն իրականացնողները և այլ ինստիտուցիոնալ, շահագրգիռ կողմերը:

Տեղեկատվական կենտրոնը տրամադրում է առցանց և հեռախոսային խորհրդատվություն, ինչպես նաև կազմակերպում է տեղեկատվական օրեր, առերես հանդիպումներ և բաց դռների օրեր:
2025 թվականի ընթացքում տեղեկատվական կենտրոնն ունեցել է 4,000-ից ավելի շահառու, 1,300 անհատի և կազմակերպությունների տրամադրվել է խորհրդատվություն և տեղեկատվություն եվրոպական երիտասարդական ծրագրերի վերաբերյալ, իրականացվել 28 հանրային միջոցառում, կազմակերպվել տեղեկատվական այցեր ՀՀ թվով 10 համայնք:



When: 1 January – 31 December 2025

Where: Gyumri, Armenia

Aim: To provide information on opportunities for young people and youth organizations within the “Erasmus+ Youth” and “European Solidarity Corps” programmes and support stakeholders in implementation of their projects.

Description: The Network of Info Centres for “Erasmus+ Youth and European Solidarity Corps Programmes” has been established in 2017. The Info Centres are functioning in six Eastern Partnership countries (Armenia, Georgia, Azerbaijan, Ukraine, Moldova, Belarus).
The coordination of activities of the Info Centres is carried out by a single organization selected from each partner country on the basis of the open call.

“Youth Initiative Centre” (YIC) NGO is in charge of coordination of activities of the Info Centre in Armenia already in its ninth year.

The target groups of the Info Centre are young people, youth organizations, youth workers, youth policy makers and other institutional stakeholders.

The Info Centre provides on-line and phone consultancy, as well as organizes face to face meetings, info days and open doors.
During 2025, the Info Centre had more than 4,000 beneficiaries, 1,300 individuals and organizations received consultations and information on European youth programmes, 28 public events were held and informational visits were organized to 10 communities of RA.



«ԵՄ-ն՝ հանուն երիտասարդների շրջանավարտների ցանց» 5

“EU4Youth Alumni network” 5

Երբ. Հունվար – հուլիս 2025 թ.

Որտեղ. Հայաստան

Նպատակ. Մոբիլիզացնել ԵՄ տարբեր երիտասարդական ծրագրերին մասնակցած երիտասարդներին, պահպանել նրանց ոգևորությունը և մոտիվացիան, ինչպես նաև վերջիններիս կապել իրենց համայնքների սահմանափակ հնարավորություններով երիտասարդների հետ՝ նրանց ակտիվացնելու և ԵՄ շարժունակության տարբեր ծրագրերում ներգրավելու նպատակով:

Նկարագրություն. «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն, Հայաստանում «Erasmus+ Երիտասարդություն և Եվրոպական համերաշխության կորպուս» ծրագրերի տեղեկատվական կենտրոնի շրջանակներում, համակարգել է «ԵՄ-ն՝ հանուն երիտասարդների շրջանավարտների ցանց»-ի հայաստանյան ծրագրի հինգերորդ փուլը: Ծրագիրն իրականացվել է EU4Youth Coordination and Support-ի կողմից Արևելյան գործընկերության 5 երկրներում (Հայաստան, Ադրբեջան, Մոլդովա, Վրաստան, Ուկրաինա):
«ԵՄ-ն՝ հանուն երիտասարդների շրջանավարտների ցանց» ծրագիրը համախմբել է 50 երիտասարդների Արևելյան գործընկերության երկրներից (յուրաքանչյուր երկրից 10 ներկայացուցիչ), ովքեր իրենց հերթին աշխատել են տեղի երիտասարդների և դեռահասների հետ՝ ուղղորդելով վերջիններիս և իրականացնելով տեղական համայնքային նախաձեռնություններ:

2025 թվականի ընթացքում ցանցի անդամներն իրականացրել են երիտասարդների կարողությունների զարգացմանը, մասնագիտական կողմնորոշմանը, ոչ-ֆորմալ կրթությանը, քաղաքացիական ակտիվության խթանմանը, փափուկ և լեզվական հմտությունների զարգացմանն ուղղված տարբեր նախաձեռնություններ: Նախաձեռնություններն իրականացվել են Արթիկ, Օշական, Իջևան, Գավառ համայնքներում և Երևանում:
«ԵՄ-ն՝ հանուն երիտասարդների շրջանավարտների ցանց» ծրագրի 2025 թվականի շրջափուլի անդամներն էին Արթուր Ադամյանը, Անուշ Մկրտչյանը, Արուսյակ Գյունաշյանը, Մերի Դավթյանը, Արամ Գևորգյանը, Հասմիկ Թորոսյանը, Ծողիկ Ղազարյանը, Սոֆի Աբրահամյանը, Մարիա Եսայանը, Մարիա Գյուլամիրյանը և Մերի Բատիկյանը:



When: January – July 2025

Where: Armenia

Aim: To sustain and mobilize the enthusiasm and voluntary spirit of young people generated during their participation in the above-mentioned EU projects and programmes. It offers Alumni the opportunity to connect with disadvantaged young people in their countries and support them to become more active in their communities and actively participate in EU mobility programmes.

Description: “Youth Initiative Centre” NGO in the frames of the Info Centre for Erasmus+ Youth and European Solidarity Corps Programmes in Armenia coordinated the “EU4Youth Alumni network” fifth edition of the Armenian project. The project was implemented by EU4Youth Coordination and Support in 5 Eastern Partnership countries (Armenia, Azerbaijan, Moldova, Georgia, Ukraine).
“EU4Youth Alumni network” united 50 young people from Eastern Partnership countries (10 from each country) who in their turn worked with local adolescents and youngsters guiding them to implement local community initiatives.

During 2025 the alumni implemented various initiatives aimed at youth capacity building, professional orientation, non-formal education, civic activism, development of language and soft skills in Artik, Oshakan, Ijevan, Gavar communities and in Yerevan.
The participants of “EU4Youth Alumni network” in 2025 were Anush Mkrtchyan, Artur Adamyan, Arusyak Gyunashyan, Meri Davtian, Aram Gevorgyan, Hasmik Torosyan, Shoghik Ghazaryan, Sofi Abrahamyan, Maria Yesayan, Maria Gyulamiryan, Meri Batikyan.





«Եվրոպան տեղայնացվում է»

“Europe Goes Local”

Երբ. օգոստոս 2022 թ. - դեկտեմբեր 2027 թ.

Որտեղ. Շիրակ, Լոռի, Տավուշ, Արմավիր, Գեղարքունիք, Սյունիք, Հայաստան

Նպատակ. Նպաստել եվրոպական ընդգրկուն ցանցի ստեղծմանը և միջազգային համագործակցության հաստատմանը Եվրոպական միության ու Արևելյան գործընկերության երկրների համայնքապետարանների, տեղական երիտասարդական հասարակական, հովանոցային կազմակերպությունների և անհատ փորձագետների միջև:

Նկարագրություն. «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն, ՍԱԼՏՈ Արևելյան Եվրոպա և Կովկաս ռեսուրսային կենտրոնի հետ համատեղ, Հայաստանում «Erasmus+ Երիտասարդություն և Եվրոպական համերաշխության կորպուս» ծրագրերի տեղեկատվական կենտրոնի շրջանակներում իրականացնում է Եվրոպական միության «Եվրոպան տեղայնացվում է» ծրագիրը Հայաստանի տարբեր մարզերում:
«Եվրոպան տեղայնացվում է» ծրագիրը ռազմավարական գործընկերություն է, որի մեջ ներկայումս ներգրավված են ՍԱԼՏՈ ռեսուրսային կենտրոններ, Եվրամիության Էրազմուս+ ծրագրի 27 ազգային գործակալություններ և վերջիններիս շուրջ 200 համայնքային գործընկերներ:
2021 թվականից «Եվրոպան տեղայնացվում է» ծրագիրը հասանելի է դարձել նաև Եվրամիությանը հարակից գործընկեր երկրների համար՝ ՍԱԼՏՈ ռեսուրսային կենտրոնների ներգրավմամբ՝ «Erasmus+ Երիտասարդություն և Եվրոպական համերաշխության կորպուս ծրագրերի» տեղեկատվական կենտրոնների աջակցությամբ:
2022 թվականից Հայաստանից «Եվրոպան տեղայնացվում է» ցանցին են միացել Շիրակի, Լոռու, Տավուշի, Արմավիրի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի Գյումրի, Սպիտակ, Իջևան, Արմավիր, Վաղարշապատ, Խոյ, Գավառ, Վարդենիս և Տաթև համայնքների համայնքապետարանները:





When: August 2022 - December 2027

Where: Shirak, Lori, Tavush, Armavir, Gegharkunik, Syunik, Armenia

Aim: To contribute to the creation of the European network and development of international cooperation between the municipalities, youth NGOs, umbrella organizations and individual experts from the EU and Eastern Partnership countries.

Description: “Youth Initiative Centre” NGO in cooperation with SALTO Eastern Europe and Caucasus Resource Centre implements a long-term project of the EU “Europe Goes Local” in different regions of the RA in the frames of the Info Centre for Erasmus+ Youth and European Solidarity Corps Programmes in Armenia.
“Europe Goes Local” is a strategic partnership which involves SALTO Resource Centres, 27 National Agencies of the European Union’s Erasmus+ programme and about 200 of their municipal partners.
Starting from 2021 “Europe Goes Local” project is available for partner countries neighboring the EU with the involvement of SALTO Resource Centres and assistance of the Info Centres for Erasmus+ Youth and European Solidarity Corps Programmes.
Since 2022 from Armenia the municipalities of Gyumri, Spitak, Ijevan, Armavir, Vagharshapat, Khoy, Gavar, Vardenis and Tatev communities of Shirak, Lori, Tavush, Armavir, Gegharkunik and Syunik regions have joined the network.





Որպես «Եվրոպան տեղայնացվում է» երկարաժամկետ ծրագրի բաղադրիչ՝ արդեն երրորդ տարին իրականացվում է «Եվրոպան տեղայնացվում է. Մենթորության նախագիծ Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի և Մոլդովայի համար» ծրագիրը, որի նպատակն է զինել համայնքապետարանների ներկայացուցիչներին համապատասխան գիտելիքներով և փորձով՝ իրենց համայնքներում երիտասարդական աշխատանքի ռազմավարության մշակման, երիտասարդական ծրագրերի իրականացման և երիտասարդական աշխատանքի եվրոպական փորձի տեղայնացման նպատակով:
2025 թվականին «Մենթորության» ծրագրի երրորդ փուլում Հայաստանից ներգրավվել են Գյումրի, Վաղարշապատ, Իջևան և Վարդենիս համայնքները: Ծրագրի ընթացքում ներգրավված համայնքների ներկայացուցիչները մենթորի աջակցությամբ մշակել են իրենց աշխատանքային պլանները, մասնակցել կարողությունների զարգացման դասընթացներին և ուսումնական այցերին, որոնք տեղի են ունեցել Հունաստանում ու Մոլդովայում:

As one of the components of the "Europe Goes Local" long-term project, already the third year "Europe Goes Local - Mentorship programme for the countries of Armenia, Georgia, Azerbaijan and Moldova" is being implemented. The aim of the programme is to equip municipality representatives with appropriate knowledge and experience to develop youth work strategies in their communities, implement youth projects in line with the European Youth Work Agenda and from the perspective of municipalities and of local youth work actors.
In 2025 Gyumri, Vagharshapat, Ijevan and Vardenis communities from Armenia were involved in the third phase of the "Mentorship" programme. In the frames of the programme the representatives of involved communities developed their work plans with the support of the mentor, participated in capacity building trainings and study visits in Greece and Moldova.









ԵՀԿ կամավորների տարեկան գնահատման հանդիպում

ESC Annual Volunteering Event

Երբ. 10 – 12 օգոստոս 2025 թ.

Որտեղ. Գյումրի, Հայաստան

Նպատակ. Հնարավորություն ստեղծել ԵՀԿ նախկին կամավորներին գնահատելու իրենց ԵՀԿ ծրագրերն ու կիսվել իրենց փորձառությամբ, տեղի երիտասարդների շրջանում տեղեկատվություն տարածել ԵՀԿ ծրագրերի վերաբերյալ:

Նկարագրություն. Հայաստանում «Erasmus+ Երիտասարդություն և Եվրոպական համերաշխության կորպուս» ծրագրերի տեղեկատվական կենտրոնը, ՍԱԼՏՈ Արևելյան Եվրոպա և Կովկաս ռեսուրսային կենտրոնի և «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության հետ համատեղ, Երիտասարդության միջազգային օրվա շրջանակներում օգոստոսի 10-12-ը Գյումրիում հյուրընկալեց Եվրամիության «Եվրոպական համերաշխության կորպուս» ծրագրի կամավորների տարեկան գնահատման հանդիպումը:

Գնահատման հանդիպմանը մասնակցեցին 28 երիտասարդներ Հայաստանի տարբեր համայնքներից, որի շրջանակներում մասնակիցները հնարավորություն ունեցան կիսվել իրենց միջազգային կամավորական աշխատանքի փորձով և անդրադառնալ համայնքում իրենց վերաինտեգրմանը:
Օգոստոսի 11-ին վերջիններս Գյումրու Թատերական հրապարակում տեղադրված ԷՐԱԶՄՈՒՍ+ Երիտասարդություն և Եվրոպական համերաշխության կորպուս ծրագրերի տեղեկատվական տաղավարում ներկայացրին ԵՀԿ ծրագրի կողմից երիտասարդներին ընձեռվող հնարավորությունները:
Ծրագրի մասնակիցներն անցկացրին նաև խաղարկություն Եվրոպական համերաշխության կորպուս ծրագրի թեմայով, որի արդյունքում հաղթողները ստացան մրցանակներ:





When: 10 – 12 August 2025

Where: Gyumri, Armenia

Aim: To evaluate and reflect on ESC projects of ex-volunteers and their volunteering experience, to promote European Solidarity Corps volunteering among local youth.

Description: The Info Centre for Erasmus+ Youth and European Solidarity Corps programmes in Armenia in cooperation with SALTO EECA and Youth Initiative Centre NGO hosted a 3-day ESC Annual Volunteering Event in Gyumri in the frames of the International Youth Day. The meeting was attended by 28 young people from different communities of Armenia.
During the meeting the ex-volunteers had a chance to reflect on their international volunteering experience and speak about their reintegration into the community.

During the promo event the participants of the ESC annual volunteering event introduced the ESC opportunities provided to the young people from the Erasmus+ Youth and European Solidarity Corps Info Tent situated in Theatre square in Gyumri. They also held a quizz on ESC and the winners got prizes.










EUROPEAN
SOLIDARITY
CORPS


EUROPEAN
SOLIDARITY
CORPS



ԵՀԿ մենթորների տեղական ներածական դասընթաց

"Local introductory training for ESC mentors"

Երբ. 20 դեկտեմբեր 2025 թ.

Որտեղ. Գյումրի, Հայաստան

Նպատակ. Բարելավել Եվրոպական միության «Եվրոպական համերաշխության կորպուս» (ԵՀԿ) ծրագրի կամավորական ծրագրերում ներգրավված երիտասարդների գիտելիքները՝ նպաստելով կամավորական ծրագրեր հյուրընկալող կազմակերպությունների ներուժի զարգացմանը և ԵՀԿ ծրագրերի որակի բարձրացմանը:

Նկարագրություն. Հայաստանում «Erasmus+ Երիտասարդություն և Եվրոպական համերաշխության կորպուս» ծրագրերի տեղեկատվական կենտրոնը դեկտեմբերի 20-ին Գյումրիում իրականացրեց Եվրամիության «Եվրոպական համերաշխության կորպուս» ծրագրի մենթորների մեկօրյա տեղական ներածական դասընթաց:
Դասընթացի շրջանակներում ՀՀ տարբեր համայնքների թվով 15 երիտասարդներ և երիտասարդական կառույցների ներկայացուցիչներ հնարավորություն ունեցան ավելի մանրամասն ծանոթանալու «Եվրոպական համերաշխության կորպուս» կամավորական ծրագրին, ընձեռվող հնարավորություններին, ինչպես նաև բացահայտեցին ԵՀԿ կամավորներին աջակցելու և ուղղորդելու համար անհրաժեշտ կարևոր մեթոդներ, որոնք կօգնեն նրանց կայանալ որպես որակյալ մենթորներ:

Հանդիպման ավարտին մասնակիցներին հանձնվեցին վկայականներ:





When: 20 December 2025

Where: Gyumri, Armenia

Aim: To improve the knowledge of young people involved in the European Solidarity Corps programme by contributing to the development of the potential of host organizations implementing ESC projects and increasing the quality of the latter.

Description: On the 20th of December the Info Centre for Erasmus+ Youth and European Solidarity Corps programmes in Armenia held a 1-day local introductory training course on ESC mentorship in Gyumri.
In the frames of the training course 15 young people and representatives of youth organizations from different cities of Armenia had an opportunity to learn more about ESC programme, the opportunities the latter provides as well as to discover vital methods and tools to support and guide the volunteers towards the development of their competences and become qualified mentors.

The participants received certificates of participation at the end of the training.





Վճարովի եռամսյա աշխատանքային պրակտիկա

Paid three-month internship and fellowship

Երբ. Օգոստոս - նոյեմբեր 2025 թ.

Որտեղ. Լոռի, Տավուշ, Գեղարքունիք, Արմավիր, Շիրակ, Սյունիք

Նպատակ. Ծրագրի նպատակն էր հզորացնել երիտասարդներին՝ ընձեռելով աշխատանքային փորձ, հմտություններ ձեռք բերելու և քաղաքացիական ու հասարակական ոլորտներում գործունեություն ծավալելու հնարավորություններ, զինել երիտասարդներին գործնական փորձով և խթանել մասնակցությունը հանրային ոլորտներում:

Նկարագրություն. Եռամսյա վճարովի փորձնակության և ֆելոուշիփի ծրագրի շրջանակում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և պետական հաստատությունների գործունեությամբ հետաքրքրված կամ այդ ոլորտներում ներգրավված երիտասարդների համար հայտարարվել էր բաց մրցույթ, որի արդյունքում ծրագրում ընդգրկվել են 9 փորձնակ և 8 ֆելոու:

Զուգահեռաբար հայտարարվել էր առանձին բաց մրցույթ՝ պետական և ոչ պետական ոլորտներից հյուրընկալող կազմակերպությունների և հաստատությունների համար, որի արդյունքում ընտրվել են 11 հյուրընկալող կազմակերպություններ:

Ծրագրի ընթացքում յուրաքանչյուր փորձնակ և ֆելոու ունեցել է պատասխանատու կոնտակտային անձ, ով ապահովել է շարունակական աջակցություն և ուղղորդում աշխատանքային պրակտիկայի ողջ ընթացքում: Ստորև ներկայացված են հյուրընկալող կազմակերպություններն ու հաստատությունները, ինչպես նաև համապատասխան փորձնակներն ու ֆելոուները:



When: August - November 2025

Where: Lori, Tavush, Gegharkunik, Armavir, Shirak, Syunik

Aim: The project aims to empower young people by providing them with opportunities for career-related work experience, skill development, and engagement in civic and public affairs.
The program aimed to equip young people with practical experience, develop their skills, and promote participation in the public sector.

Description: Within the framework of the program, a three-month paid internship and fellowship opportunity was provided to 9 interns and 8 fellows interested or engaged in the work of civil society organizations and public institutions. Participants were selected through an open call.

In parallel, a separate open call was announced for host organizations and institutions from both the public and non-public sectors, resulting in the selection of up to 11 host entities. Prior to the placement process, host organizations received preparatory training and guidance from the project team.

Throughout the program, each intern and fellow was assigned a contact person who provided ongoing mentorship and support. The host organizations and institutions together with their respective interns and fellows are presented below.



- Դիանա Մելիքյան՝ «Քաղաքացիական երիտասարդական կենտրոն» ՀԿ
- Ջուլիետա Պետրոսյան՝ Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբ ՀԿ
- Աստղիկ Առուստամյան՝ «Գործընկերություն և ուսուցում» ՀԿ
- Մարգարիտա Թորոսյան՝ «Կանանի» սոցիալ-հոգեբանական կենտրոն ՀԿ
- Ժորա Համբարյան՝ «Մենք» ՀԿ
- Նվարդ Զալինյան՝ Սասուն Փափախչյան ԱՁ (կոշիկի արտադրամաս)
- Մարիամ Սողոմոնյան՝ «Պանդո» ՀԿ
- Լաուրա Գրիգորյան՝ «ԱԳԱՊԵ ՎՈՐԼԴ» ՀԿ
- Հայկ Ալեքսանյան՝ «Հայաստանի Այգեգործների Ասոցիացիա» ՀԿ
- Աքսաննա Խաչատրյան՝ «ԱԳԱՊԵ ՎՈՐԼԴ» երիտասարդական ՀԿ
- Լևոն Վարդապետյան՝«Քաղաքացիական երիտասարդական կենտրոն» ՀԿ
- Անուշ Մկրտչյան՝ «Կանանի» սոցիալ-հոգեբանական կենտրոն ՀԿ
- Արմեն Բաբայան՝ «Գործընկերություն և ուսուցում» ՀԿ
- Կարինե Ղազարյան՝ «Լուսաստղ» ՀԿ
- Կամո Գալստյան՝ «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ
- Անի Աթոյան՝ Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբ ՀԿ
- Արամ Գևորգյան՝«Պանդո» ՀԿ

- Diana Meliqyan – “Civil Youth Center” NGO
- Julieta Petrosyan – Journalist Club “Asparez” NGO
- Astghik Arustamyan – “Partnership and Education” NGO
- Margarita Torosyan – “Kanani” Social-Psychological NGO
- Jhora Hambaryan – “We Youth” NGO
- Nvard Zalinyan – Sasun Papakhchyan P/E (Shoe manufacturing company)
- Mariam Soghomonyan – “Pando” NGO
- Laura Grigoryan – “AGAPE World” NGO
- Hayk Aleksanyan – “Armenian Gardeners Association” NGO
- Aksanna Khachatryan – “AGAPE World” NGO
- Levon Vardapetyan – “Civil Youth Center” NGO
- Anush Mkrtchyan – “Kanani” Social-Psychological NGO
- Armen Babayan – “Partnership and Education” NGO
- Karine Ghazaryan – “Lusastgh” NGO
- Kamo Galstyan – “Equal Rights, Equal Opportunities” NGO
- Ani Atoyan – Journalist Club “Asparez” NGO
- Aram Gevorgyan – “Pando” NGO



Աղջիկների առաջնորդության ճամբար (GLOW)

Girls Leading the World (GLOW) camp

Երբ. 19-25 հունիսի 2025 թ.

Որտեղ. Աղվերան, Հայաստան

Նպատակ. Ձևավորել Հայաստանում իրավահավասար և ժողովրդավարական հասարակություն՝ զարգացնելով մարզաբնակ երիտասարդ աղջիկների առաջնորդական հմտությունները և նպաստել քաղաքացիական ակտիվությանը:

Նկարագրություն. Ծրագրի հիմնական բաղադրիչը առաջնորդության 7-օրյա ճամբարն էր, որը տեղի ունեցավ 2025 թվականի հունիսի 19-25-ը Կոտայքի մարզի Աղվերան համայնքում: Ճամբարին մասնակցում էին Հայաստանի 9 մարզերից, Երևանից և Արցախից տեղահանված 13-15 տարեկան 40 երիտասարդ աղջիկներ: Ճամբարի ընթացքում մշակվել են 14 համայնքային նախագծեր: Նախագծերից «Երկիրը մեր ձեռքերում» նախաձեռնությունն իրականացվել է Լոռու մարզի Ստեփանավան քաղաքում, իսկ «Անիի ձայները» ամառային անգլերենի ճամբարը՝ Շիրակի մարզի Մարալիկ քաղաքում: «Կանաչ Արմավիր և Արագածոտն» նախագիծը իրականացվել ՝ Արմավիրի և Արագածոտնի մարզերում, ներառյալ Աղձք համայնքը: Շիրակի մարզում իրականացվել են նաև «Կամավորի ուժը» նախագիծը Արթիկ քաղաքում և «Հոռոմի սիրտը կրկին բաբախում է» նախագիծը Հոռոմ համայնքում: Տավուշի մարզում իրականացվել են մի շարք նախաձեռնություններ, այդ թվում՝ «Ճամփորդիր Չնաշխարհիկի հետ» Բերդ քաղաքում, «Մաքրության արշավ» Ներքին Ծաղկավան համայնքում և «Կարմիր աստղեր» նախագիծը Դիլիջանում և այլն: Ճամբարը ոչ միայն հզորացրեց աղջիկներին՝ զարգացնելով նրանց առաջնորդության, թիմային աշխատանքի և նախաձեռնողականության հմտությունները, այլև ստեղծեց վստահության, փոխըմբռնման ու համագործակցության միջավայր: Աղջիկները վերադառնում են իրենց համայնքներ՝ լի նոր գաղափարներով, ոգևորությամբ և նպատակով՝ իրականություն դարձնելու իրենց նախագծերը: Ճամբարականները ստեղծեցին և ներկայացրին իրենց համայնքային ծրագրերը՝ կիրառելով ճամբարի ընթացքում ստացած ծրագրերի մշակման և կառավարման գիտելիքները:



When: 19-25 June 2025

Where: Aghveran, Armenia

Aim: GLOW is a girl empowerment project aiming for a more equal and democratic society in Armenia by empowering the young female population from the regions through leadership and civic education.

Description: The main component of the program was a 7-day leadership camp, which took place on June 19-25, 2025 in the Aghveran, Kotayk region. The camp was attended by 40 young girls aged 13-15, from 9 regions of Armenia, Yerevan and Artsakh. During the camp, 14 community projects were developed. Among them, the initiative “The Earth in Our Hands” was implemented in Stepanavan, Lori region, while the summer English camp “Voices of Ani” was carried out in Maralik, Shirak region. The “Green Armavir and Aragatsotn” project was implemented in the Armavir and Aragatsotn regions, including the Aghtsk community. In Shirak region, the projects “The Power of the Volunteer” in Artik and “Horom’s Heart Beats Again” in the Horom community were also implemented. Several initiatives were carried out in Tavush region as well, including “Travel with Chnashkharhik” in Berd, the “Cleanliness Campaign” in the Nerqin Tsaghkavan community, and the “Red Stars” project in Dilijan, among others. The camp not only empowered the girls by developing their leadership, teamwork and initiative skills, but also created an environment of trust, mutual understanding and cooperation. The girls return to their communities full of new ideas, enthusiasm and purpose to make their projects a reality. The campers created and presented their community projects, applying the knowledge of program development and management they gained during the camp.












LOW
GIRLS LEADING OUR WORLD
ARMENIA







Առաջնորդության առցանց դպրոցներ

Online Leadership schools

Երբ.


Առաջին հոսք՝ 8, 15 և 22 փետրվարի 2025 թ.
Երկրորդ հոսք՝ 9, 16 և 23 փետրվարի 2025 թ.
Երրորդ հոսք՝ 15, 22 և 29 մարտ 2025 թ.
Չորրորդ հոսք՝ 16, 23 և 30 մարտ 2025 թ.


Ձևաչափ. Առցանց


Նպատակ. «Առաջնորդության առցանց դպրոց»-ի նպատակն էր համախմբել Հայաստանի հեռավոր շրջանների 13-25 տարեկան երիտասարդներին՝ տրամադրելով հիմնարար գիտելիքներ առաջնորդության վերաբերյալ:

Նկարագրություն. Ստեղծվեցին 4 առցանց առաջնորդության դպրոցներ՝ Հայաստանի տարբեր, այդ թվում՝ ամենահեռավոր բնակավայրերից ներգրավված երիտասարդների համար, որոնց ընդհանուր մասնակցեցին 72 երիտասարդ: Դպրոցների շրջանակում մասնակիցները ձեռք բերեցին հիմնարար գիտելիքներ և զարգացրին առաջնորդական հմտություններ:

Երեքշաբաթյա դպրոցները կառուցված էին փուլային և ինտենսիվ ձևաչափով՝ ներառելով երեք ամբողջօրյա առցանց դասընթացներ՝ յուրաքանչյուրի միջև մեկշաբաթյա ընդմիջումով: Դասընթացների միջակայքում մասնակիցներին տրվում էին տնային առաջադրանքներ՝ նպատակ ունենալով խթանել ձեռք բերված գիտելիքների և հմտությունների գործնական կիրառումը իրենց համայնքներում:







When:


First flow: February 8, 15, and 22, 2025
Second flow: February 9, 16, and 23, 2025
Third flow: March 15, 22, and 29, 2025
Fourth flow: March 16, 23, and 30, 2025


Format: Online

Aim: The "Online Leadership School" aims to bring together young people aged 13-25 from remote regions of Armenia. Its primary objective is to provide participants with fundamental knowledge of leadership competencies.

Description: 4 online leadership schools were established, bringing together 72 young participants from various and remote communities across Armenia, during which they gained fundamental knowledge and leadership skills. The three-week programs were structured to include three full-day sessions, with a one-week break between each session. During the online classes, participants were assigned homework aimed at ensuring the application of the knowledge and skills they acquired in their communities.









Առաջնորդության լաբ
Leadership Lab

Երբ. 27 հոկտեմբեր - 1 նոյեմբեր 2025 թ.

Որտեղ. Գյումրի, Հայաստան

Նպատակ. Ճամբար-դասընթացի նպատակն էր նպաստել քաղաքական գործունեությամբ հետաքրքրվող երիտասարդների կարողությունների զարգացմանը, խթանել համագործակցությունը տարբեր քաղաքական հայացքներ ունեցող երիտասարդների միջև և աջակցել երիտասարդներին իրենց համայնքներում դրական փոփոխություններ իրականացնելու ճանապարհին:

Նկարագրություն. Վեցօրյա ճամբար-դասընթացը միավորեց Հայաստանի 8 մարզերի տարբեր համայնքներից և Երևանից ժամանած ակտիվ և նախաձեռնող երիտասարդներին: Այս տարի ճամբար-դասընթացի թեման էր քաղաքական մասնակցությունը, քաղաքացիական ներգրավվածությունը և առողջ քաղաքական դիսկուրսի ձևավորումը: «Առաջնորդության լաբ»-ի ընթացքում մասնակիցները ներգրավված էին հետաքրքիր քննարկումների, թիմային վարժանքների և գործնական սիմուլյացիաների մեջ: «Առաջնորդության լաբ»-ի վեցօրյա հանդիպմանը հետևեց մասնակիցների կողմից մշակված համայնքային նախաձեռնությունների իրականացումը հաջորդող երեք ամիսների ընթացքում: Ընդհանուր իրականացվել է 29 համայնքային նախաձեռնություն Արմավիր, Արարատ, Շիրակ, Գեղարքունիք, Լոռի, Տավուշ, Կոտայք, Սյունիք մարզերում և Երևանում:



When: 27 October - 1 November 2025

Where: Gyumri, Armenia

Aim: The aim of the camp-training is to contribute to the development of the capabilities of young people interested in political activity, to promote cooperation between young people with different political views, and to support young people on the path to implementing positive changes in their communities.

Description: The 6-day camp-training brought together active and enterprising young people from different communities of 8 regions of Armenia and Yerevan. This year, the theme of the camp-training was political participation, civic engagement, and the formation of a healthy political discourse. During the “Leadership Lab”, participants were involved in interesting discussions, team exercises, and practical simulations. The six-day meeting of the “Leadership Lab” was followed by the implementation of community initiatives developed by the participants over the next three months. A total of 29 community initiatives were implemented in Armavir, Ararat, Shirak, Gegharkunik, Lori, Tavush, Kotayk, Syunik regions and Yerevan.





Գաղափարների լաբ
Idea Lab

Երբ.

01-02 փետրվար 2025թ.
06-07 հունիս 2025 թ.

Որտեղ. Գյումրի, Հայաստան

Նպատակ. Խթանել նորարարությունը և առաջնորդությունը երիտասարդների շրջանում, բարձրացնել նրանց դերը հասարակությունում:

Նկարագրություն. «Գաղափարների լաբ»-ը մեկնարկեց 2024 թ. դեկտեմբերին, որի նպատակ էր հզորացնել Հայաստանի տարբեր համայնքներից 15 երիտասարդների՝ նրանց փոխանցելով համապատասխան գիտելիքներ, և ֆինանսական աջակցության ու մենթորության միջոցով նպաստել համայնքային նախագծերի իրականացմանը:
Ծրագրի ընթացքում մասնակիցները անցան վերապատրաստման երկու փուլ. 1) երկօրյա դասընթաց՝ նախագծերի մեկնարկի և գաղափարների ձևավորման համար, 2) երկօրյա ինկուբացիոն դասընթաց՝ գաղափարների կատարելագործման և դրանք կենսունակ նախագծերի վերածելու նպատակով:
Հունիսի 7-ին Գյումրիում տեղի ունեցավ «Գաղափարների Լաբ» նախագծի ամփոփիչ միջոցառումը: Միջոցառման ընթացքում ծրագրի 15 նախաձեռնող երիտասարդ առաջնորդներն իրենց թիմակիցների հետ ներկայացրին իրենց նախաձեռնությունները՝ ցուցադրելով վեց ամիսների ընթացքում կատարված աշխատանքի արդյունքները:





When:

01-02 February 2025
06-07 June 2025

Where: Gyumri, Armenia

Aim: Promote youth innovation, leadership, and increase the role of youth in society.

Description: The Idea Lab was launched in December 2024 with the goal of empowering 15 young people from various communities in Armenia by providing them with relevant knowledge and supporting the implementation of community-based projects through seed funding and mentorship.
They were supported through two rounds of training: 1) a 2-day inception training and 2) a 2-day incubation training to help shape their ideas into ready-to-implement projects.
On June 7, the final event of the “Ideas Lab” project took place in Gyumri. During the event, the 15 young initiator leaders of the project, together with their teammates, presented their initiatives, showcasing the results of six months of work.







- «Քաղաքացիական ակտիվիզմի դպրոց»՝ Արմավիրի մարզ, ք. Էջմիածին
- «Candle Craft»՝ Արմավիրի մարզ, ք. Արմավիր
- «STOPPING BULLYING»՝Շիրակի մարզ, ք. Գյումրի
- «Leaders of Tomorrow»՝Արարատի մարզ, Զանգակատուն
- «Գաղափարից գործ»՝Սյունիքի մարզ, ք. Տաթև
- «Պատմամշակութային այց Գյումրիում»՝Շիրակի մարզ, ք. Գյումրի
- «Համայնքի զորեղացում՝ երիտասարդների կողմից»՝ Շիրակի մարզ, գ. Փոքրաշեն
- «Գաղափարների Լաբը Հոռոմում»՝Շիրակի մարզ, գ. Հոռոմ
- «Ներհամայնքային կապեր, Մասնագիտական կողմնորոշում և Խոսքի մշակույթ»՝ Արմավիրի Մարզ, գ. Մրգաստան
- «Երիտասարդները հանուն պայծառ Ապագայի»՝ Շիրակի մարզ, գ. Կամո
- «Փափուկ հմտություններ 101. Ձեր հաջողության գործիքակազմը»՝ Լոռու մարզ, ք. Վանաձոր
- «Դսեղի երիտասարդները հանուն համայնքի զարգացում»՝Լոռու մարզ, գ. Դսեղ
- «Մասնագիտությունների հետ ծանոթացումը որպես մասնագիտության ճիշտ ընտրության ուղղենիշ»՝ Շիրակի մարզ, գ. Ամասիա
- «Բացահայտիր քեզ, զարգացրու քո համայնքը»՝ Լոռու մարզ, ք. Սպիտակ,
- «Վանաձորցի երիտասարդների թիմը՝ հանուն հայկական ավանդույթների և արժեքների»՝ Լոռու մարզ, ք. Վանաձոր

- Civic Activism School - Ejmiatsin, Armavir Region
- Candle Craft - Armavir, Armavir Region
- STOPPING BULLYING - Gyumri, Shirak Region
- Leaders of Tomorrow - Zangakatun, Ararat Region
- From Idea to Action - Tatev, Syunik Region
- Cultural-Historical Visit in Gyumri - Gyumri, Shirak Region
- Community Empowerment by Youth - Pokrashen, Shirak Region
- Ideas Lab in Horom - Horom, Shirak Region
- Intra-community Connections, Career Orientation, and Public Speaking- Mrgashat, Armavir Region
- Youth for a Bright Future - Kamo, Shirak Region
- Soft Skills 101: Your Toolbox for Success - Vanadzor, Lori Region
- Youth of Dsegh for Community Development - Dsegh, Lori Region
- Career Introduction as a Guide to the Right Profession Choice - Amasia, Shirak Region
- Discover Yourself, Develop Your Community - Spitak, Lori Region
- Team of Vanadzor Youth for Armenian Traditions and Values - Vanadzor, Lori Region







ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ

3

ՆՊԱՍՏԵԼ ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ԴԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԽՆԴԻՐՆԵՐ

3.1. Խթանել երիտասարդների ներգրավվածությունը տեղական, գլոբալ և հասարակական գործընթացներում:

3.2. Աջակցել երիտասարդների շահերի պաշտպանությանը:

3.3. Կայացնել երիտասարդական աշխատանքի ինստիտուտը:

3.4. Բարձրացնել երիտասարդական ծառայությունների որակը:

STRATEGIC AIM

3

CONTRIBUTE TO INCREASING THE ROLE OF YOUNG PEOPLE IN THE SOCIETY

OBJECTIVES

3.1. To promote youth involvement in local and global social processes.

3.2. To contribute to youth advocacy.

3.3. To develop the institute of youth work.

3.4. To improve the quality of youth services.

Կամավորների դպրոց

Volunteers' School

Երբ. Հունիս-նոյեմբեր 2025 թ.

Որտեղ. Գյումրի, Հայաստան

Նպատակ. Խթանել կամավորության մշակույթը և բարձրացնել երիտասարդների ներգրավվածությունը համայնքային կյանքում՝ գիտելիքների և հիմնարար հմտությունների զարգացման ու գործնական փորձի ձեռքբերման միջոցով:

Նկարագրություն. 2024 թվականից «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն իրականացնում է նոր ծրագիր՝ «Կամավորների դպրոց»-ը, որին 2025 թվականին մասնակցում էին 16-24 տարեկան 12 երիտասարդներ Գյումրիից և Շիրակի մարզի տարբեր բնակավայրերից:
Վեց ամիսների ընթացքում կամավորները մասնակցել են տեսական և գործնական հանդիպումների՝ ուսումնասիրելով հետևյալ թեմաները՝

- «Ի՞նչ է կամավորությունը»,
- «Ի՞նչ է երիտասարդական աշխատանքը. նպատակներ, հիմնական ձևաչափեր և թիրախներ»,
- «Կոնֆլիկտները գործնական հարաբերություններում»,
- «Հաղորդակցման հմտություններ»,
- «Հանրային կապեր և սոցիալական մեդիայի կառավարման առանձնահատկություններ»,
- «Ինչպես կազմել գրագետ ինքնակենսագրական և մոտիվացիոն նամակ»,
- «Թվային գրագիտություն»,
- «ԵՆԿ ՀԿ անդամության և կամավորության կանոնակարգերի ծանոթացում»,
- «Կլիմայի փոփոխությունը և երիտասարդների ներգրավվածությունը»:

2025 թվականի նոյեմբերի 23-ին ակտիվ կամավորների նախաձեռնությամբ իրականացվեց «Stories and Steps. Begin Your Journey with YIC» խորագրով միջոցառումը, որը դարձավ հարթակ մարդկային պատմությունների, նոր փորձառությունների և հնարավորությունների շուրջ համախմբվելու համար: Միջոցառմանը մասնակցեցին շուրջ 60 երիտասարդներ:

«Կամավորների դպրոց»-ի շրջանակներում մասնակիցները հնարավորություն են ունեցել կամավոր աշխատանք իրականացնել ԵՆԿ-ի կողմից կազմակերպված տարբեր միջոցառումների և ծրագրերի ընթացքում՝ հարստացնելով իրենց փորձը, գիտելիքներն ու հմտությունները:
«Կամավորների դպրոց»-ի ավարտին մասնակիցները ստացան ավարտական վկայականներ:



When: May – November 2024

Where: Gyumri, Armenia

Goal: The goal of the "Volunteers' School" of Youth Initiative Centre is promote a culture of volunteerism and increase youth engagement in civic life. Through this program, youth will develop critical competencies in collaborative teamwork, leadership development, personal growth and social program implementation. Beyond skill building, participants will gain hands-on understanding of volunteering values through direct experience, showcasing their knowledge, commitment and abilities in community service and cooperation efforts.

Description. Since 2024, the "Youth Initiative Centre" NGO has been implementing a new program, the "Volunteer School". In 2025 12 young people aged 16–24 from Gyumri and various communities in the Shirak region were engaged.

Over the course of six months, the volunteers participated in theoretical and practical sessions, exploring the following topics:

- "Communication skills",
- "How to create a well-written CV and motivation letter",
- "Volunteerism as a civic concept",
- "Public relations and social media management",
- "Project development and team organization",
- "Digital literacy",
- "Introduction to YIC NGO Membership and Volunteer Regulations",
- "Climate Change and Youth Engagement".

On November 23, 2025, the "Stories and Steps. Begin Your Journey with YIC" event was organized by the initiative of the active volunteers. The event became a platform for sharing human stories, new experiences, and opportunities, bringing together around 60 young people.
Within the program, participants had the opportunity to engage in volunteer work during various events and programs organized by YIC, enriching their experience, knowledge, and skills.

Upon completion of the "Volunteer School" participants received certificates of completion.



«Թիմային կամավորություն՝ բարձր առաջնահերթության ոլորտներում»

“Team volunteering in High Priority Areas”

Նկարագրություն. Թիմային կամավորությունը բարձր առաջնահերթության ոլորտներում լայնածավալ, մեծ ազդեցություն ունեցող նախագիծ է, որն աջակցում է առնվազն երկու տարբեր երկրներից եկող երիտասարդների կողմից իրականացվող կամավոր աշխատանքը: Ծրագրի շրջանակներում երիտասարդները միավորվում են համերաշխություն քարոզող կարճաժամկետ ծրագրերի շուրջ, որոնք ուղղված են ընդհանուր եվրոպական մարտահրավերների հաղթահարմանը:

Թիմային կամավորությունը հնարավորություն է տալիս 18-30 տարեկան երիտասարդներին իրենց ներդրումն ունենալ հասարակության զարգացման մեջ՝ 2 շաբաթից 2 ամիս տևողությամբ կամավոր աշխատանք իրականացնելու միջոցով:





Description. Volunteering Teams in High Priority Areas are large-scale, high impact projects supporting voluntary activities carried out by young people from at least two different countries coming together to express solidarity by implementing short-term interventions that address common European challenges.

Volunteering Teams provide an opportunity to young people aged 18 to 30 years old to contribute to society development by short-term volunteering activities for a period between 2 weeks and 2 months.







«H.O.P.E. – Օգնել երիտասարդներին հաղթահարել խոչընդոտները և զարգանալ հետպատերազմյան միջավայրում»

"H.O.P.E. - Helping youth to Overcome obstacles and grow in a Post-war Environment"

Երբ. 13 ապրիլ – 14 մայիս 2025 թ., 16 ապրիլ – 15 մայիս 2025 թ., 17 հուլիս – 15 օգոստոս 2025 թ.

Որտեղ. Գդինիա, Լեհաստան և Գյումրի, Արթիկ, Հայաստան

Նպատակ. Աջակցել երիտասարդների անձնական և մասնագիտական զարգացմանը՝ մշակութային և ոչ-ֆորմալ կրթական գործունեության, հոգեկան առողջության, խաղաղաշինության, հավասար հնարավորությունների և մարդու իրավունքների միջոցով:

Գործընկեր երկրներ. Իտալիա, Ֆրանսիա, Ուկրաինա, Լեհաստան, Հայաստան

Նկարագրություն. Եռափուլ թիմային կամավորության շրջանակներում 30 օր տևողությամբ հյուրընկալվել են 20 կամավորներ Լեհաստանում և 15-ական կամավորներ Հայաստանում՝ 5 տարբեր երկրներից:

Լեհաստանում ընթացող ծրագրի ընթացքում կամավորներն աշխատել են Գդինիա քաղաքի տարբեր երիտասարդական կենտրոններում՝ իրականացնելով մշակութային, սպորտային, ժամանցային և լեզվի ուսուցման նախագծեր տեղացի և Ուկրաինայից ներգաղթած երիտասարդների ու համայնքի երեխաների համար:

Հայաստանյան առաջին փուլի՝ ապրիլ 16-ից մայիսի 15-ն ընկած ժամանակահատվածի ընթացքում, կամավորները հյուրընկալվել են Գյումրի և Արթիկ համայնքներում՝ գործունեություն ծավալելով «Գյումրու երիտասարդների տուն» և «Արթիկի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոններում:
Կամավորները կազմակերպել և իրականացրել են «Եվրո քվեսթ» հանրային միջոցառումը Գյումրիում Եվրոպայի օրվա շրջանակներում, ինչպես նաև տարաբնույթ աշխատարաններ, մշակութային և ժամանցային ծրագրեր նշված երիտասարդական կենտրոններում:

Հայաստանյան երկրորդ փուլի՝ հուլիսի 17-ից օգոստոսի 15-ն ընկած ժամանակահատվածի ընթացքում, կամավորները ներգրավվել են «Գյումրու երիտասարդների տուն» և «Արթիկի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոններում իրականացվող բակային ճամբարների կազմակերպչական և իրականացման աշխատանքներում, ինչպես նաև Երիտասարդության միջազգային օրվան նվիրված միջոցառումներում, որոնք տեղի են ունեցել Գյումրի և Ապարան համայնքներում:



When: 13 April – 14 May 2025, 16 April – 15 May 2025, 17 July – 15 August 2025

Where: Gdynia, Poland, Gyumri, Artik, Armenia

Aim: To support personal and professional development of young people through cultural and non-formal educational activities, mental health, peace building, equal opportunities and human rights.

Partner countries: Italy, France, Ukraine, Poland, Armenia

Description: As part of a three-phase Volunteering teams project, 20 volunteers were hosted in Poland and 30 volunteers during two projects in Armenia for a duration of 30 days from 5 different countries.

During the project in Poland, the volunteers worked in various youth centers in the city of Gdynia, implementing cultural, sports, entertainment activities and language courses for local youth and children as well as for young people who had migrated from Ukraine.

During the first phase in Armenia, from April 16 to May 15, the volunteers were hosted in the communities of Gyumri and Artik, carrying out activities at the "Gyumri Youth House" and "Artik Youth House" open youth centers.
The volunteers planned and implemented the "Euro Quest" public event in Gyumri within the framework of the Europe Day, as well as various workshops, cultural and entertainment activities at the "Gyumri Youth House" and "Artik Youth House" open youth centers.

During the second phase in Armenia, from July 17 to August 15, the volunteers were involved in organizing and implementing summer camps at the "Gyumri Youth House" and "Artik Youth House" open youth centers, as well as the events dedicated to International Youth Day held in the communities of Gyumri and Aparan.
















EUROCLUB

«ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ» ԴԱՍԸՆԹԱՑ

"YOUTH WORKER TRAINING" COURSE

Երբ. 01 հուլիսի - 30 նոյեմբերի 2025 թ.

Որտեղ. Շիրակի և Արագածոտնի մարզեր, Հայաստան

Նպատակ. Կատարելագործել երիտասարդների հետ պրակտիկ աշխատանք կատարող անձանց մասնագիտական և անձնային որակները՝ ազգային և ՏԻՄ մակարդակում որակյալ և գիտելիքահեն երիտասարդական աշխատանք իրականացնելու համար:

Նկարագրություն. 2025 թվականին «Երիտասարդական աշխատողի վերապատրաստում» ծրագիրը «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն իրականացրել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ֆինանսական աջակցությամբ՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակի հետ համագործակցությամբ:

Ծրագրի շրջանակում իրականացվել է եռափուլ դասընթաց 2 հոսքերով, որին ընտրվել և մասնակցել են նախորդ տարվա 25-ի փոխարեն 50 ներկայացուցիչներ պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններից, ՔՀԿ-ներից և Հայաստանում գործող տարբեր երիտասարդական կենտրոններից, որոնք զբաղվում են երիտասարդական աշխատանքով կամ որոնց գործառույթներն առնչվում են երիտասարդության հարցերին:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐՆ ԵՆ ԵՂԵԼ՝

- Երիտասարդական աշխատանք,
- Երիտասարդական պետական քաղաքականություն,
- Երիտասարդական տեղական քաղաքականություն,
- Ուսումնառության տեսակներ. ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթություն,
- Հոգեկան առողջություն և ներառականություն,
- Թիմային աշխատանք և առաջնորդություն,
- Հաղորդակցման հմտություններ և ոճեր,
- Կոնֆլիկտների հաղթահարում,
- Ծրագրերի մշակում, իրականացում, ֆոնդահայթայթում, մշտադիտարկում և գնահատում,
- Երիտասարդական միջազգային համագործակցություն:



When: July 1 - November 30, 2025

Where: Shirak and Aragatsotn regions, Armenia

Aim: To enhance the professional and personal skills of youth workers, enabling them to deliver high-quality, knowledge-based services at both local and national levels.

Description: In 2025 “Youth Initiative Centre” NGO implemented the “Youth Worker Training” with the financial support of the Ministry of Education, Science, Culture and Sports of the Republic of Armenia, in cooperation with the UNICEF Armenia Office.

A three-stage course was implemented by 2 flows within the framework of the project, in which 50 representatives instead of previous 25 were selected and participated. The participants were from state and local self-government bodies, CSOs and various youth centers operating in Armenia, which are engaged in youth work or whose functions are related to youth issues.

MAIN TOPICS OF THE COURSE WHERE THE FOLLOWING:

- Youth work,
- State youth policy,
- Local youth policy,
- Types of training. formal, non-formal and informal education,
- Mental health and inclusion,
- Teamwork and leadership,
- Communication skills and styles,
- Conflicts management,
- Program development, implementation, fundraising, monitoring and evaluation,
- International youth cooperation.





Ծրագրի ընթացքում մասնակիցներն ընդգրկվել են մի քանի փուլերով կազմված վերապատրաստման դասընթացներում, որոնց միջև ընկած ժամանակահատվածում նրանք իրականացրել են գործնական առաջադրանքներ՝ ուսումնասիրելով իրենց համայնքներում առկա երիտասարդական հիմնախնդիրները: Մասնակիցները քարտեզագրել են հիմնական մարտահրավերները, մշակել դրանց լուծմանն ուղղված ծրագրային գաղափարներ և կյանքի կոչել մի շարք տեղական նախաձեռնություններ:

Դասընթացների շարքը հաջողությամբ ավարտած 45 մասնակիցները մասնակցության հավաստագրեր ստացան 2025 թվականի նոյեմբերի 28-ին Երևանում կայացած ամփոփիչ միջոցառման ընթացքում: Միջոցառմանը ներկա էին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը, ՀՀ-ում Յունիսեֆի ներկայացուցչի տեղակալ Սիլվիա Մեստրոնին, «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ խորհրդի նախագահ Արթուր Նաջարյանը, ինչպես նաև տեղական և միջազգային գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչներ:





In between the three-stage training courses, the participants completed home assignments tby mapping youth issues of their communities, developed and implemented projects aimed at solving some of those issues.

The 45 participants who successfully completed the training courses received certificates of participation during the closing event held in Yerevan on November 28th, 2025. The event was attended by Artur Martirosyan, Deputy Minister of Education, Science, Culture and Sports of the Republic of Armenia, Silvia Mestroni, Deputy Representative of UNICEF in Armenia, Artur Najaryan, Chairman of the Board of the "Youth Initiative Centre" NGO, as well as representatives of local and international partner organizations.









«EmpowerYouth. Երիտասարդներին հուզող հարցերի շուրջ որոշումների կայացման գործում երիտասարդական կազմակերպությունների կարողությունների զարգացում»

"EmpowerYouth: Enabling Youth Organizations to Shape Decision-Making on Issues that Matter Most to Young People"

Երբ. 01 հունվար - 31 դեկտեմբեր 2025 թ.

Որտեղ. Հայաստան

Նպատակ. Խթանել երիտասարդների քաղաքացիական ակտիվությունը և մասնակցությունը կլիմայի փոփոխության դեմ պայքարի արշավներում, որոնք հատկապես մտահոգիչ են երիտասարդների համար:

Նկարագրություն. 2025 թվականին «EmpowerYouth» Էրազմուս+ ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ գործողությունները.

- Ապրիլի 18-ին ԵՆԿ ՀԿ-ն անցկացրեց առցանց տեղեկատվական հանդիպում-աշխատաժողով, որի ընթացքում երիտասարդական, բնապահպանական կազմակերպությունների, երիտասարդական կենտրոնների ու ոչ ֆորմալ խմբերի ներկայացուցիչներին ներկայացվեց «EmpowerYouth» ծրագիրը՝ նախատեսվող գործողություններն ու հնարավորությունները:

- Հուլիսի 8-12-ը Ռումինիայի Բուխարեստ քաղաքում տեղի ունեցավ Էրազմուս+ «EmpowerYouth – Learning and Action for Civic Engagement and Climate Impact» խորագրով ուսումնական այց, որին Հայաստանի թիմը ներկայացնում էին «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի ծրագրի ղեկավար Յուլյանա Հովհաննիսյանը, բնապահպանական ոլորտի փորձագետ Արթուր Հարությունյանը, և ընտրված 3 կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ Լիլիթ Խաչատրյանը («ՀԿ կենտրոն»), Անդրանիկ Պապոյանը («Պանդո» ՀԿ) և Վանիկ Առաքելյանը («Evergreens» ՀԿ):

- «EmpowerYouth. Երիտասարդների ներգրավվածություն և կլիմայի փոփոխություն» ուսումնական մոդուլի մշակում և «EcoVille» սեղանի կրթական խաղի թարգմանություն և տպագրություն: Մշակված ռեսուրսները տրամադրվել են հետաքրքրված թիրախային կազմակերպություններին:



When: 01 January - 31 December 2025

Where: Armenia

Aim: The “EmpowerYouth” Erasmus+ KA2 project aims to support youth engagement through climate action - a topic that resonates strongly with young people and can serve as a catalyst for broader civic participation.

Description: In 2025, the following activities were implemented within the framework of the "EmpowerYouth" Erasmus+ programme:

- On 18 April, YIC NGO hosted an online informational meeting-workshop, during which representatives of youth and environmental organisations, youth centres, and informal groups were introduced to the EmpowerYouth project, its planned activities, and opportunities.

- From 8–12 July, the Erasmus+ Study Visit entitled "EmpowerYouth – Learning and Action for Civic Engagement and Climate Impact" took place in Bucharest, Romania. The Armenian team was represented by Yulyana Hovhannisyan, project manager at “Youth Initiative Center” NGO, Artur Harutyunyan, environmental expert, as well as representatives from selected organisations: Lilit Khachatryan (“NGO Center”), Andranik Papoyan (“Pando” NGO), and Vanik Arakelyan (“Evergreens” NGO).

- The "EmpowerYouth: Youth Engagement and Climate Action" learning kit and the "EcoVille" educational board game was translated and printed.The developed resources were provided to interested target organisations.






- Ռումինիայում կայացած ուսումնական այցի մասնակիցներ Լիլիթ Խաչատրյանը ու Վանիկ Առաքելյանը իրականացրեցին առցանց դասընթացներ՝ «Երիտասարդների քաղաքացիական ներգրավվածության խթանում» և «Կլիմայի փոփոխությունն ու երիտասարդների ներգրավվածությունը» խորագրերով՝ հոկտեմբերի 29-ին և 31-ին, և Անդրանիկ Պապոյանը վարեց առերես դասընթաց «EcoVille կրթական խաղ և համայնքային կարիքների վերհանում» խորագրով՝ նոյեմբերի 21-ին:


- Նոյեմբերի 24-25-ը «EmpowerYouth» ծրագրի «Ռումինիայի Եվրոպական քաղաքականության կենտրոն»-ի, Եվրոպական հարցերի հետազոտությունների և շահերի պաշտպանության կենտրոն»-ի և «Ատինատի» ասոցիացիայի գործընկերները՝ մասնակցեցին Գյումրիում ԵՆԿ ՀԿ-ի կողմից կազմակերպված ծրագրային միջանկյալ գնահատման հանդիպմանը:

- Participants of the study visit held in Romania, Lilit Khachatryan and Vanik Arakelyan, delivered online training courses entitled “Promoting Youth Civic Engagement” and “Climate Change and Youth Engagement” on 29 and 31 October, while Andranik Papoyan conducted an in-person training entitled “EcoVille Educational Game and Identifying Community Needs” on 21 November.

- On 24–25 November, partners of the “EmpowerYouth” project: the Romanian Center for European Policies, the Center for Research and Advocacy in EU Policies and the Atinati Association, participated in an interim project evaluation meeting organised by YIC NGO in Gyumri.











Ամենամյա երիտասարդական ֆորում

Annual Youth Forum

Երբ. 26-28 սեպտեմբեր 2025 թ.

Որտեղ. Աղվերան, Հայաստան

Նպատակ. Ֆորումի նպատակն էր վեր հանել ու վերլուծել երիտասարդության առջև ծառացած մարտահրավերները՝ խթանելով երիտասարդների և պետական ու տեղական իշխանությունների միջև կառուցողական երկխոսությունը: Այն ծառայեց որպես ռազմավարական հարթակ՝ երիտասարդության քաղաքական մասնակցության, քաղաքացիների ներգրավվածության, կամավորության, զբաղվածության, երիտասարդական աշխատանքի և ոլորտում միջմշակութային համագործակցության զարգացման համար:

Նկարագրություն. Երիտասարդական ֆորումը տեղի ունեցավ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Երիտասարդական կազմակերպությունների միության հետ սերտ համագործակցությամբ: Ֆորումը ներառում էր պանելային քննարկումներ, աշխատաժողովներ, մեդիա գովազդային նախաձեռնություններ և այլն: Ֆորումի ընթացքում անմիջականորեն ներգրավվել է 129 մասնակից, ինչպես նաև անուղղակիորեն ընդգրկելով շուրջ 1,300 երիտասարդի՝ Հայաստանի տարբեր մարզերում անցկացված նախաֆորումային ֆոկուս խմբային քննարկումների միջոցով: Այն ծառայեց որպես հանրային խորհրդակցության գործիք պետական և մասնավոր սեկտորների, քաղաքացիական հասարակական կազմակերպությունների և երիտասարդների միջև՝ երիտասարդական քաղաքականության թեմաներով գիտելիքների փոխանակման համար: Բացի այդ, ֆորումը նպաստեց ներգրավված տարբեր կողմերի միջև կապերի հաստատմանը, գիտելիքների և մտքերի փոխանակմանը, զարգացնելով պետական պաշտոնյաների փորձը, որը և արժեքավոր ներդրում կունենա քաղաքականություն մշակողների համար: Ավելին, այն կարևոր դեր ունեցավ գործողությունների առաջ մղման և որպես հարթակ ծառայելու Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող այլ նախագծերի համար:



When: 26-28 September 2025

Where: Aghveran, Armenia

Aim: The Forum served as a strategic platform aimed at addressing the pressing challenges facing youth today and fostering structured dialogue between young people and local and national authorities. It created a unique space for meaningful engagement on topics such as youth participation in governance, civic activism, volunteering, employment, youth work, and international cooperation.

Description: The Youth Forum organized annually in close cooperation with the Ministry of Education, Science, Culture and Sport of the Republic of Armenia and the Youth Organizations Union. It included panel discussions, workshops, media promotion initiatives, etc. During the period, the action was implemented as a national-level youth participation initiative, directly engaging 129 participants during the main activity and indirectly involving approximately 1,300 young people through pre-forum focus group discussions conducted in different regions of Armenia. The Forum served as a public consultation tool between public and private sectors, CSOs and youth to exchange around youth-related policies. It will also help to connect different stakeholders, share experience and ideas, senilities public officials, and provide meaningful inputs to policy-makers. Moreover, it helped to promote action results, as well as provide a platform to other sectoral EU-funded projects.












YIC
APV
alo


YIC
APV



Երիտասարդական ՔՀԿ-ների կարողությունների զարգացում. ուսումնական այց Բելգիա

Capacity Building of Youth CSOs: Study Visit to Belgium

Երբ. 9-14 հունիս 2025 թ.

Որտեղ. Բելգիա

Նպատակ. Ուսումնական այցի նպատակն էր ամրապնդել պետական կառույցների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համագործակցությունը, ծանոթանալ Եվրոպական միության երիտասարդական քաղաքականության գործիքակազմին, խթանել փորձի փոխանակումը և ձևավորել նոր գործընկերություններ՝ հիմնված եվրոպական առաջադեմ փորձի վրա:

Նկարագրություն. Ուսումնական այցը կարևոր հարթակ էր փորձի փոխանակման, ԵՄ երիտասարդական քաղաքականության ավելի խորքային ընկալման, նոր գործընկերությունների ձևավորման և հայաստանյան երիտասարդական կառույցների կարողությունների զարգացման համար:

Այցի շրջանակում տեղի ունեցան հանդիպումներ մի շարք կառույցների և կազմակերպությունների հետ, այդ թվում՝

- «Էրազմուս+ միջազգային երիտասարդական աշխատանք» ազգային գործակալությունում (JINT), որտեղ ներկայացվեցին ԵՄ ֆինանսավորման հնարավորությունները, տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության գործիքակազմը, ինչպես նաև Եվրոպան տեղայնացվում է» նախաձեռնության փորձը,
- Եվրոպական հանձնաժողովի Արևելյան գործընկերության բաժնում, որտեղ քննարկվեցին ԵՄ-Հայաստան համագործակցության հիմնական ուղղությունները երիտասարդության ոլորտում,
- EU4Youth ծրագրի համակարգման և քաղաքականության աջակցության թիմի հետ, որը ներկայացրեց տարածաշրջանային քաղաքականության զարգացման ուղղությունները և հայաստանյան շահառու կազմակերպություններին տրամադրվող աջակցությունը,



When: 9-14 June 2025

Where: Belgium

Aim: The study visit aimed to strengthen cooperation between state institutions and civil society organizations, explore European Union youth policy tools and mechanisms, promote the exchange of experience, and foster new partnerships grounded in advanced European practices.

Description: The study visit served as an important platform for experience sharing, strengthening partnerships, deepening participants' understanding of EU youth policy, and enhancing the institutional capacities of youth-focused organizations and structures in Armenia.

During the visit, the delegation held a series of meetings with key institutions and organizations in Belgium, including:

- The Erasmus+ National Agency for International Youth Work (JINT), where participants explored EU funding opportunities, cooperation mechanisms with local authorities, and the "Europe Goes Local" initiative;
- The Eastern Partnership Unit of the European Commission, where discussions focused on the main directions of EU-Armenia cooperation in the field of youth;
- The EU4Youth Coordination and Policy Support Team, which presented regional youth policy development initiatives and support mechanisms available for Armenian beneficiary organizations;





- Ֆլամանդական երիտասարդության հարցերով նախարարությունում, որտեղ ներկայացվեց Բելգիայի երիտասարդական քաղաքականության օրենսդրական և ինստիտուցիոնալ շրջանակը,
- Գենտի քաղաքապետարանում և Bataljong կազմակերպությունում, որտեղ ներկայացվեց երիտասարդամետ քաղաքների ձևավորման և երիտասարդների մասնակցության խթանման փորձը,
- Cultureghem և Capital հասարակական կազմակերպություններում, որոնք գործունեություն են ծավալում համայնքային զարգացման, սոցիալական ձեռնարկատիրության և թվային ներառման ուղղություններով,
- YouthProAktiv միջազգային ցանցում, որտեղ քննարկվեցին կրթական և շահերի պաշտպանության հարթակներում երիտասարդների ներգրավման մեխանիզմները,
- De Ambrassade կազմակերպությունում՝ ֆլամանդական երիտասարդական աշխատանքի մոդելին և դրա գործելակերպին ծանոթանալու նպատակով,
- Mediawijs կազմակերպությունում, որտեղ ներկայացվեցին թվային գրագիտության և մեդիագրագիտության զարգացման նախաձեռնությունները:

Ուսումնական այցն ամփոփվեց Բելգիայի Երիտասարդության հարցերով նախարարությունում կայացած երկխոսությամբ, որի ընթացքում քննարկվեցին Հայաստանում երիտասարդական քաղաքականության օրենսդրական և ռազմավարական շրջանակները, ինչպես նաև հետագա համագործակցության և փորձի փոխանակման հնարավորությունները:



- The Flemish Ministry for Youth, which introduced the legislative and institutional framework of youth policy in Belgium;
- The Municipality of Ghent and Bataljong, which shared their experience in developing youth-friendly cities and participatory youth policies;
- The NGOs Cultureghem and Capital, which presented their work in the areas of community development, social entrepreneurship, and digital inclusion;
- The international YouthProAktiv network, where discussions focused on youth participation in educational and advocacy platforms;
- The De Ambrassade organization, which introduced the Flemish youth work model and its approaches;
- The Mediawijs organization, which presented initiatives aimed at promoting digital literacy and media education among young people.

The study visit concluded with a dialogue session with the Ministry of Youth Affairs of Belgium, focusing on youth policy legislation, strategic frameworks, and opportunities for further cooperation and knowledge exchange between Armenia and Belgium.





Երիտասարդական միջավայրի գործունեության ուղեցույց

Youth Environment Activity Guide

Երբ. Դեկտեմբեր 2024 թ. - նոյեմբեր 2025 թ.

Որտեղ. Հայաստան

Նպատակ. Ուղեցույցը նախատեսված է պետության, համայնքի, մասնավոր հատվածի կողմից կամ նրանց երկկողմ կամ բազմակողմ համագործակցությամբ ստեղծված երիտասարդական կենտրոնների, ոլորտային կազմակերպությունների, մասնագետների և փորձագետների, երիտասարդական աշխատողների, ուսուցանողների համար:

Նկարագրություն. Սույն ուղեցույցը ներկայացնում է երիտասարդական միջավայրերի կազմակերպման հիմնական սկզբունքներն ու մոտեցումները՝ հիմնված արդի լավագույն փորձի և էթիկական նորմերի վրա: Այն ունի խորհրդատվական բնույթ, սակայն նպատակաուղղված է ապահովելու միասնական և հստակ պատկերացում երիտասարդական կենտրոնների նպատակների, գործառույթների և գործունեության արդյունավետ կազմակերպման մասին: Ուղեցույցը ծառայում է նաև որպես մեթոդական գործիք՝ աջակցելով ծառայությունների շարունակականության ապահովմանը: Այն նախատեսված է պետական, համայնքային և մասնավոր կառույցների, ինչպես նաև երիտասարդական ոլորտի մասնագետների, աշխատողների և կազմակերպությունների համար՝ հիմնվելով տեղական ու միջազգային փորձի ուսումնասիրության վրա:

https://bit.ly/4w0K03r

When: December 2024 - November 2025

Where: Armenia

Aim: The guide is intended for youth centers, sectoral organizations, specialists and experts, youth workers, and professionals from the state, community, private sector, or their bilateral or multilateral cooperation.

Description: This guide presents the main principles and approaches for organizing youth environments, based on current best practices and ethical standards. Although it is advisory in nature, it aims to ensure a clear and unified understanding of the goals, functions, and effective organization of youth centers. It also serves as a methodological tool, supporting the continuity of services provided. The guide is intended for state, community, and private sector entities, as well as professionals, youth workers, and organizations in the youth field, and is based on the study of both local and international experience.

https://bit.ly/4w0K03r



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ

4

ԿԱՅԱՑՆԵԼ ԵՆԿ-Ն ՈՐՊԵՍ ՓՈԽԱԿԵՐՊՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԽՆԴԻՐՆԵՐ

4.1 Կատարելագործել ԵՆԿ կառավարման համակարգերը:

4.2 Պահպանել ԵՆԿ-ում ստեղծարար և գիտելիքահեն մշակույթը:

4.3 Մեծացնել ԵՆԿ-ի ֆինանսական անկախությունը:

STRATEGIC AIM

4

DEVELOP YIC AS A TRANSFORMATIONAL ESTABLISHMENT

OBJECTIVES

4.1. To improve YIC management systems.

4.2. To maintain a creative and knowledge-based culture in YIC.

4.3. To increase the financial independence of YIC.

«ԲայքԼայֆ» սոցիալական ձեռնարկատիրություն

"BikeLife" social entrepreneurship

Երբ. 1 մարտի - 30 նոյեմբերի 2025 թ.

Որտեղ. Շիրակ, Գեղարքունիք, Հայաստան

Նպատակ. Քարոզել հեծանվավարությունը Գյումրիում, Գավառում վերջիններիս շրջակայքում՝ նպաստելով երիտասարդների կյանքի որակի, շրջակա միջավայրի բարելավմանը, համայնքի ենթակառուցվածքների, զբոսաշրջության զարգացմանը՝ տեղացիներին և հյուրերին մատչելի ծառայություններ մատուցելով:

Նկարագրություն. «ԲայքԼայֆ» ՍՁ-ն տրամադրում է հետևյալ ծառայությունները՝

- հեծանիվների, հեծանվային պարագաների վարձույթ,
- հեծանվավարության ուսուցում,
- հեծանվարշավների կազմակերպում,
- հեծանիվների վերանորոգում,
- հեծանվային գիդի ծառայություն,
- ուղեկցորդի ծառայություն:

2025 թվականին տեղի է ունեցել 1 հանրային միջոցառում Արթիկ քաղաքում: Հեծանվորդները «Արթիկի Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնից ուղևորվել են Հառիճավանք և հետ են վերադարձել: Միջոցառումն իրականացվել է «ԵՄ-ն հանուն երիտասարդների ցանց» ծրագրի և Եվրաակումբ Գյումրիի հետ համատեղ: Միջոցառմանն անմիջական ներգրավվածություն են ունեցել 20 հեծանվորդ, իսկ արդեն համացանցային հրապարակումներով այդ միջոցառումների, դրա թողած ազդեցության, հեծանվային մշակույթի կարևորության, առողջ կենսակերպ վարելով անհրաժեշտության մասին տեղեկացել է ավելի քան 19 հազար մարդ: Տարվա ընթացքում իրականացրել ենք անհատական հեծանվաուսուցումներ Գյումրու և Գավառի երիտասարդների համար:

Միջոցառման վերաբերյալ հրապարակումը կարող եք տեսնել հետևյալ հղումով՝

https://bit.ly/4wHe3xk

When: 1 March - 30 November 2025

Where: Shirak, Gegharkunik, Armenia

Aim: The aim of "BikeLife" SE is to spread cycling in and around Gyumri, promoting the improvement of the life quality of young people, the environment, the infrastructure of the community, the development of tourism providing affordable services to locals and guests.

Description: "BikeLife" SE provides the following services:

- rent of bicycles and accessories,
- cycling training,
- organising bicycle trips,
- repair of bicycles,
- bicycle guide service,
- guide service.

In 2025, 1 public event took place in the city of Artik. Cyclists traveled from the "Artik Youth House" open youth center to Harichavank and returned. The event was implemented jointly with the "EU for Youth Alumni Network" program and Euroclub Gyumri. 20 cyclists were directly involved in the event, and more than 19 thousand people have already been informed about these events, their impact, the importance of cycling culture, and the need to lead a healthy lifestyle through online publications. During the year, we have implemented individual cycling training for young people in Gyumri and Gavar.

You can see the post about the event at the following link:

https://bit.ly/4wHe3xk



Առաջիկա արշավների ու լուսավոր պահերի մասնակիցը կարող ես լինել նաև դու՝ հետևելով մեր սոցիալական էջերին

Facebook BikeLife
https://www.facebook.com/BikeLife.Gyumri

You can be a participant in the upcoming campaigns and bright moments with BikeLife by following us on

Instagram BikeLife Gyumri
https://www.instagram.com/bikelife.gyumri/







ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

YOUTH INITIATIVE CENTRE

YIC.AM

Ալեք Մանուկյան 26, Գյումրի 3108, Հայաստան
26 Alek Manukyan, Gyumri 3108, Armenia
(+374) 95 91 91 97
yic@yic.am